

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստանի Գերիշխանությունը Ամրագրուած է «Թրամփի Ուղի» Նախագծին Մէջ

«Թրամփի ուղի՝ յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» ծրագիրը սկսած է ձեւ ստանալ: Անցեալ շաբաթ Ուաշինկթընի մէջ կայացաւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Մարքո Ռուպիոյի ու Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի համաձայնագրուած զրոյշումներու նախագիծին վերաբերեալ: «Թրամփի ուղի» յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» (TRIPP) նախագիծին վերաբերեալ:

Այն պաշտօնապէս կը հաստատէ, որ Երեւանը ԱՄՆ կառավարութեան վերահսկողութեան տակ գտնուող յատուկ ընկերութեանը երկարաժամկէտ բացառիկ իրաւունքներ պիտի տրամադրէ երթուղիին նկատմամբ, որ Սիւնիքի մարզով պիտի կապէ Ատրպէյճանի հիմնական մասը Նախիջեւանի հետ: Համաձայնագրի հիմքին 2025 թուականի Օգոստոսին Սպիտակ տան մէջ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններն են:

Ռուպիոյի եւ Միրզոյեանի բանակցութիւններէն յետոյ, հրապարակուած TRIPP-ի «Իրականացման շրջանակի» համաձայն՝ հայամերիկեան համատեղ ընկերութիւնը պիտի կառուցէ երկաթուղի, մայրուղի, ուժանիւթի մատակարարման գիծեր եւ այլ ենթակառուցութեան օբյեկտներ տարանցիկ միջանցքի երկայնքով, ինչպէս նաեւ առնուազն 49 տարի պիտի կառավարէ զանոնք եւ պիտի գանձէ անոնցմէ

«Հայաստանի ինքնիշխանութիւնն ու իրաւագործութիւնը սահմանային եւ մաքսային գործողութիւններու նկատմամբ բացարձակ են եւ անքննելի», - կ'ըսուի յայտարարութեան մէջ: Նման հաւաստիացումներ տուաւ նաեւ Ռուպիոն, լրագրողներուն առջեւ յայտարարելով, որ ծրագիրը, որեւէ կերպ չի խախտեր Հայաստանի ինքնիշխանութիւնը:

Հակառակ բոլոր մեղադրանքներուն, որ Ամերիկեան ընկերութիւններուն պիտի յանձնուի Սիւնիքի շրջանը, նախագիծը կու գայ հաստատելու, որ այդ ընկերութիւնները ներդրումներ պիտի կատարեն շրջանէն ներս ու արդիական սարքաւորումներով պիտի բարելաւեն ճանապարհներն ու երկաթուղիները՝ Հայաստանը դարձնելով բեռնափոխադրումներու տարանցիկ կեդրոն: Ապահովելով մեծ եկամուտներ Հայաստան պիտի ստանայ իր մասնաբաժինը:

Ծիշդ է, որ ճանապարհը օգտագործող ատրպէյճանցիներու անցագրերու յանձնումը պիտի կատարուի Ամերիկեան ընկերութեան ներկայացուցիչներուն, սակայն Հայ սահմանապահները գտնուելով անցակէտերուն մօտ,

ԱՄՆ-Ն ՈՒ Հայաստանը Հրապարակած ԵՆ TRIPP-ի Վերաբերեալ Համատեղ Յայտարարութիւնը

Ուաշինկթընի մէջ կայացած բանակցութիւններէն յետոյ, ԱՄՆ պետական քարտուղար Մարքո Ռուպիոն ու ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը հրապարակեցին ՀՀ-ԱՄՆ համատեղ յայտարարութիւնը «Թրամփի ուղի» յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» (TRIPP) նախագիծին վերաբերեալ:

Այն պաշտօնապէս կը հաստատէ, որ Երեւանը ԱՄՆ կառավարութեան վերահսկողութեան տակ գտնուող յատուկ ընկերութեանը երկարաժամկէտ բացառիկ իրաւունքներ պիտի տրամադրէ երթուղիին նկատմամբ, որ Սիւնիքի մարզով պիտի կապէ Ատրպէյճանի հիմնական մասը Նախիջեւանի հետ: Համաձայնագրի հիմքին 2025 թուականի Օգոստոսին Սպիտակ տան մէջ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններն են:

Ռուպիոյի եւ Միրզոյեանի բանակցութիւններէն յետոյ, հրապարակուած TRIPP-ի «Իրականացման շրջանակի» համաձայն՝ հայամերիկեան համատեղ ընկերութիւնը պիտի կառուցէ երկաթուղի, մայրուղի, ուժանիւթի մատակարարման գիծեր եւ այլ ենթակառուցութեան օբյեկտներ տարանցիկ միջանցքի երկայնքով, ինչպէս նաեւ առնուազն 49 տարի պիտի կառավարէ զանոնք եւ պիտի գանձէ անոնցմէ



ստացուող եկամուտները:

«Հայաստանը մտադիր է ԱՄՆ-ին առաջարկել TRIPP զարգացման ընկերութեան 74 տոկոս բաժնեմասը եւ իրեն պահել 26 տոկոսը», - կ'ըսուի 8 էջնոց փաստաթուղթին մէջ: «Կը սպասուի, որ այս պայմանաւորուածութիւնը երկարաձգուի եւս 50 տարիով՝ Հայաստանի կառավարութեան յաւելեալ բաժնեմաս տրամադրելով, որուն շնորհիւ անոր մասնաբաժինը պիտի հասնի 49 տոկոսի»:

Փաստաթուղթը կ'ընդգծէ, որ Հայաստանը պիտի ունենայ լիա-

կատար «Իրաւասութիւն սահմանային վերահսկողութեան եւ մաքսային գործառնութեան նկատմամբ» TRIPP-ով իրականացուող առեւտուրի եւ տարանցման ծիրին մէջ»:

«Հայաստանի ինքնիշխանութիւնն ու իրաւագործութիւնը սահմանային եւ մաքսային գործողութիւններու նկատմամբ բացարձակ

Կաթողիկոսին Հրաւերով Եպիսկոպոսաց Ժողովը Պիտի Գումարուի Աւստրիոյ Մէջ

Ամենայն Հայոց կաթողիկոսին հրաւերով Եպիսկոպոսաց Ժողովը տեղի պիտի ունենայ Աւստրիոյ Սան Փլուլթըն քաղաքին մէջ, 16-19 փետրուարին:

Այս մասին «Ազատութեան» յայտնեց Մայր Աթոռի Տեղեկատուական համակարգի տնօրէն Եսայի քահանայ Արթէնեանը: Անոր խօսքով՝ Հայ Առաքելական եկեղեցւոյ որեւէ ժողովական մարմին, բացառութեամբ Ազգային-եկեղեցական ժողովին, իր նիստերը կրնայ գումարել որեւէ վայրի մէջ:

Մայր Աթոռի փոխանցմամբ՝ նման նախադէպեր եղած են ինչպէս Եպիսկոպոսաց Ժողովի, այնպէս ալ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի գումարման պարագային:

Աւելի վաղ, կաթողիկոսը 10-12 Դեկտեմբերին Եպիսկոպոսաց Ժողով հրաւիրած էր՝ «քննութեան առնելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյ շուրջ վերջին զարգացումները եւ ներեկեղեցական կեանքին առնչուող հարցեր»:

Մայր Աթոռ, սակայն, յայտարարեց, որ Եպիսկոպոսաց Ժողովը ժամանակաւորապէս կը յետաձգուի՝ «պայմանաւորուած բռնաճշմաններով»:

Հնդկաստանը Սկսած Է «Pinaka» Հրթիռներու Մատակարարումը Հայաստան



«Pinaka» կառավարուող հրթիռներու նմուշներ

Հնդկաստանը սկսած է «Pinaka» կառավարուող հրթիռներու առաջին խմբաքանակի մատակարարումը Հայաստան, կը հաղորդէ «The Hindu Business Line» կայքը:

Առաջման մեկնարկը տրուած է Հնդկաստանի պաշտպանութեան նախարար Ռաճնաթ Սինկի մասնակցութեամբ՝ Նակիուրի մէջ գործող Solar Defence and Aerospace

Limited (SDAL) ընկերութեան արտադրական հարթակին վրայ կազմակերպուած արարողութեան ընթացքին:

Կայքը կը նշէ, որ Հայաստանը աւելի վաղ կնքած էր շուրջ 240 միլիոն տոլարի պայմանագիր՝ չորս «Pinaka» հաշուարկներու ձեռքբերման համար, որ կը ներառէ

Ֆիտանը ԶԶ Ընտրութիւններուն Աջակցութեան Մասին Զէ Խօսած. Իրականութեան Մէջ Ի՞նչ Ըսած Է Թուրքիոյ Արտաքին Գործերու Նախարարը

ՅԱՍՄԻԿ ԶԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Հաքան Ֆիտան Յունուար 15-ին ասուլիսի ընթացքին անդրադարձած է տարածաշրջանային հարցերուն, Հայաստան-Ատրպէյճան, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ «Թրամփի ուղիին» վերաբերեալ նախազիծին:

Ըստ Փաստերու ստուգման հարթակին՝ անոր յայտարարութիւնները հայաստանեան լրագրութիւնը ու քաղաքական որոշ շրջանակներ կը ներկայացնեն աղաւաղուած, Ֆիտանին կը վերագրեն արտայայտութիւններ, որոնք ան չէ ըրած:

«Այսպէս. ասուլիսի ժամանակ Հայաստանի վերաբերեալ հատուածում Ֆիտանը, յիշեցնելով ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը՝ TRIPP-ի («Թրամփի միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման երթուղի/Trump Route to International Peace and Prosperity) իրականացման վերաբերեալ, որը քննարկուել էր Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյեանի Ուաշինկթըն կատարած այցի ընթացքում, նշել է, որ այդ հարցում կան որոշ տեխնիկական խնդիրներ: Նա յաւելել է, որ Թուրքիան եւ Ատրպէյճանը նոյնպէս ուսումնասիրում են այդ համաձայնագիրը, եւ ինքը հարցը քննարկել է Ատրպէյճանի արտաքին գործերի նախարար ձէյհուն Պայրամովի հետ:

«Խօսելով գործընթացից Թուրքիայի ակնկալիքների մա-



սին՝ Ֆիտանը նշել է. «Մենք կ'ականկալենք, որ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ նախատորագրուած այս համաձայնագիրը կ'աւարտի ստորագրմամբ, եւ որ Թուրքիոյ ու Հայաստանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորումը հնարաւորին շուտ կեանքի կը կոչուի, որպէսզի մենք կարենանք տարածաշրջանին մէջ յառաջ շարժիլ կայունութեան եւ բարեկեցութեան ճանապարհով: Ներկայիս այս կամքը կայ Ատրպէյճանի, Հայաստանի եւ Թուրքիոյ քաղաքական ղեկավարութեան մօտ. երեք կողմերն ալ ունին այդ մտադրութիւնը, եւ կան ընդամէնը քանի մը քայլեր, որոնք պէտք է իրականացնէ Հայաստանը»:

«Ֆիտանը նաեւ նշել է, որ Հայաստանում 2026 թուականի Յունիսին անցկացուելու են ընտրութիւններ, եւ որ այդ գործընթացը

կարեւոր փուլ է լինելու. «Մենք կը տեսնենք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը ներկայիս առաջատար է հասարակական կարծիքի հարցախոյզներուն մէջ: Մենք անկեղծօրէն կ'աջակցինք այն կառուցողական դերակատարման, որ ան կը ցուցաբերէ այս հարցով: Այս մօտեցումը, այս կամքը պէտք է շարունակուին»:

Այս խօսքերը ինչպէ՞ս ներկայացուցած են Հայաստանի մէջ.

Հայաստանեան լրատուական դաշտը, ինչպէս նաեւ քաղաքական, հիմնականին մէջ ընդդիմադիր շրջանակները կը տարածեն ապատեղեկատուութիւն, թէ իբր Ֆիտանը յայտնած է, որ յառաջիկայ ընտրութիւններուն Թուրքիան կ'աջակցի Փաշինեանին:

«Թուրքիայի արտաքին գործերի նախարարը այսօր բացայայտ յայտարարել է, որ յառաջիկայ

ընտրութիւնների ժամանակ իրենք աջակցելու են իրենց Նիկոլ Փաշինեանին», - իր ֆէյսպուքեան տեսաուղերձին մէջ յայտնած է «Հանրապետական» կուսակցութեան անդամ, Ազգային ժողովի պատգամաւոր Աննա Մկրտչեանը:

«Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիտանը յայտարարել է, որ Թուրքիան յառաջիկայ ընտրութիւններում աջակցում է Նիկոլ Փաշինեանին...», - գրած է «Սփուլնիկարմենիա»-ի մեկնաբան Արման Աբովեանը:

Աւելի ուշ, ապատեղեկատուական արշաւին միացաւ նաեւ «Մեր ձեռով» շարժման համակարգող Նարեկ Կարապետեանը: «Թուրքիայի արտաքին գործերի նախարարը յայտարարել է, որ Թուրքիան աջակցում է Փաշինեանին 2026 թուականի ընտրութիւններում», - ֆէյսպուքի մէջ գրած էր ան:

«Tert.am»-ը, «Ծ-րդ ալիքը», «Երկիրը»-ը իրենց հրապարակումներու վերնագրերուն մէջ գրած էին. «Թուրքիան Հայաստանի ընտրութիւններում աջակցում է Նիկոլ Փաշինեանին»:

Ֆիտանի պաշտօնական յայտարարութեան մէջ չկայ որեւէ ձեւակերպում, որ Թուրքիան կը միջամտէ Հայաստանի ընտրութիւններուն կամ պաշտօնապէս կ'աջակցի Նիկոլ Փաշինեանին որպէս թեկնածու:

«ՓԱՍՏԵՐՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

ՄԱՄԱԽԱ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$75.00, \$150.00 (First Class)
Canada \$ 250.00 (Air Mail)
Overseas \$400.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Ալիեւի «Նիւրնբերգը» Փլուզուած Է

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Յունուարի 15-ին չորս հայ պատանդներ հայրենադարձուել են: Նրանց թուում է Վազիֆ Խաչատուրեանը: Ատրպէյճանում նա մեղադրուում էր «մեշալի գիւղում ցեղասպանութիւն իրականացնելու» մէջ: «Դատարանում» նրա դէմ «տուժածները ցուցմունք են տուել»: Պաքուի «դատարանը» Վազիֆ Խաչատուրեանի «մեղքը ճանաչել է ապացուցուած» եւ նրան դատապարտել տասնհինգ տարուայ ազատազրկման: Եթէ Ատրպէյճանում օրէնքով վաթսուհինգ տարին լրացած անձանց նկատմամբ ցմահ ազատազրկումն արգելուած չլինէր, Վազիֆ Խաչատուրեանն, անկասկած, կ'ենթարկուէր առաւելագոյն պատժի: Այսօր Վազիֆ Խաչատուրեանը հայրենադարձուել է, գտնուում է բժշկական հսկողութեան ներքոյ: Նրա առողջական վիճակը գնահատուել է «բաւարար»:

Պաքուի լրատուամիջոցները չորս հայ պատանդների հայրենադարձութեան իրաւական հիմնաւորման մասին ոչինչ չեն ասում: Յայտնի չէ՝ Ի՛նչամ Ալիեւը «դատապարտեալներին ներում է շնորհել», թէ՞ դատական որեւէ ատեան նրանց արդարացման վճիռ է կայացրել կամ ոչ մէկն է տեղի ունեցել, ոչ՝ միւսը, Ալիեւը պարզապէս կարգադրել է, որ այդ անձինք պէտք է հայրենադարձուեն, եւ պատկան մարմինները կատարել են: Բայց դա արդէն

Ատրպէյճանի նախագահի եւ հանրութեան խնդիրն է: Պէտք է միայն արձանագրել, որ ընդդիմադիր աղբիւրները համարում են, որ Ալիեւը «հայ մանկասպան Վազիֆ Խաչատուրեանին ազատ է արձակել, իսկ Ղարաբաղն ազատագրած ատրպէյճանցիները մնում են բանտում»:

Այս համատեքստն առանձնակի ուշադրութեան է արժանի: Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարութեան ներկայացուցիչների դէմ «քրէական գործը» Պաքուի քարոզչութիւնը ներկայացնում է որպէս «ատրպէյճանական Նիւրնբերգ»:

Ալիեւը նպատակադրուած է «դատական արդարացի քննութեամբ» միջազգայնացնել եւ ընդունելի դարձնել, որ «լեռնային Ղարաբաղի խնդիր

գոյութիւն չունի, չի ունեցել, Հայաստանը Ատրպէյճանին ներկայացրել է տարածքային անհիմն պահանջներ, սանձազերծել նուաճողական պատերազմ եւ պարտուել»:

Ըստ այդմ, նա Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարութեան ներկայացուցիչներին առաջադրել է «պատերազմական եւ մարդկայնութեան դէմ գործած յանցանքների» մեղադրանք: Վազիֆ Խաչատուրեանի «մանկասպանութիւնը» մէկ-միասնական «քրէական մեղադրանքի» մի դրուագ է: Վազիֆ Խաչատուրեանից այդ ծանրագոյն մեղադրանքը հանուել է: Այսինքն, զուտ իրաւական առումով «ատրպէյճանական Նիւրնբերգը» փլուզուել է: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հնդկաստանը Սկսած Է

Շարունակուած էջ 1-էն

բազմափող հրթիռային համակարգերու համար նախատեսուած ղեկավարող հրթիռներու եւ այլ ռազմական սարքի մատակարարում: Հրետանային կայանքներու առաքումները սկսած էին 2023-ի Յուլիսին եւ աւարտած է 2024-ի Նոյեմբերին, իսկ այժմ սկսած է ղեկավարող հրթիռներու փուլային արտահանումը:

Պաշտօնական աղբիւրներու փոխանցմամբ՝ հրթիռները Հայաստանի պիտի ուղարկուին «պատ-

րաստ ըլլալու աստիճանով»:

Կը նախատեսուի, որ «Pinaka» կառավարող հրթիռները յառաջիկայ օրերուն պիտի ընդգրկուին նաեւ Հնդկաստանի բանակի սպառազինութեան մէջ: Այդ ծիրին մէջ Ռաճնաթ Սինկը Նակփուրի մէջ բացած է SDAL-ի միջին տրամաչափի գինամթերքի նոր արտադրական համալիր, որ, ըստ անոր, մաս կը կազմէ կառավարութեան ռազմավարութեան՝ նուազեցնելու Հնդկաստանի կախուածութիւնը գինամթերքի ներմուծումէն:

«Մեր Ձեռով»-ի Անդամները Կուսակցութիւն Արձանագրած Են՝ «Ուժեղ Հայաստան» Անունով



«Տաշիր» ընկերութիւններու սեփականատէր Սամուէլ Կարապետեանի ընտանիքին կողմէ ձեւաւորուած «Մեր Ձեռով» շարժման անդամները արձանագրած են կուսակցութիւն՝ «Ուժեղ Հայաստան» անուամբ:

«Ուժեղ Հայաստան» կուսակցութիւնը արձանագրած են Ալեքսան Ալեքսանեանը, Աշոտ Ֆարսեանն ու Լենա Մաթեոսեանը: Անոնք երկուքն ալ այդ շարժման անդամներն են:

Կուսակցութիւնը ստեղծուած էր նախորդ տարեվերջին՝ Դեկտեմբեր 8-ին, եւ կը կոչուէր «Հայամէտ», այնուհետեւ 2026-ի Յունուար 16-ին անուանափոխուած է «Ուժեղ Հայաստան»-ի:

Կուսակցութիւնը արձանագրուած է «Տաշիր» ընկերութիւններու խումբի երեւանեան գրասեն-

եակին մէջ:

«Մեր Ձեռով» շարժման մամուլի խօսնակ Մարիաննա Ղահրամանեան յայտնեց, որ «Սամուէլ Կարապետեանի գլխաւորած «Մեր Ձեռով» ժողովրդական շարժումը Հայաստանում իրական ու որակական փոփոխութիւններ իրականացնելու օրակարգ ունի»: Անոր խօսքով՝ այդ փոփոխութիւններուն հնարաւոր է հասնիլ քաղաքական յայտի եւ քաղաքական աշխոյժ գործընթացներուն մէջ ներգրաւուելու միջոցով:

«Սամուէլ Կարապետեանի գլխաւորած ուժի կազմակերպական աշխատանքներն աւարտական փուլում են: Առաջիկայում քաղաքական ուժը հանդէս կու գայ յստակ օրակարգով եւ կը ներկայացնի Հայաստանի զարգացման իր տեսլականը», - փոխանցեց Մարիաննա Ղահրամանեան:

ՔՊ-ի Նախընտրական Ցուցակին Մէջ Ընդգրկուելու Համար Հաստատուած Է Սօս 300 Թեկնածութիւն. Աժ Նախագահ

«Քաղաքացիական Պայմանագրի» նախընտրական ցուցակին մէջ ընդգրկուելու համար հաստատուած է մօտաւորապէս 300 հոգիի թեկնածութիւն, Ազգային ժողովին մէջ լրագրողներուն յայտնեց Աժ նախագահ Ալէն Սիմոնեան:

«Զտման փուլ էլ չկայ: Ամբողջական ցուցակը ձեւաւորելու է համաժողովը», - ի պատասխան «Ազատութեան» հարցումին՝ ըսաւ խորհրդարանի խօսնակը:

Ցուցակին մէջ ընդգրկուելու համար թեկնածուներու լսումները աւարտած են: Շաբաթներ շարունակ կուսակցութեան վարչութիւնը՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ, նիստերուն կը հրաւիրէր եւ հարցումներ կ'ուղղէր պատգամաւորի թեկնածուի յաւակնորդներուն:

Աժ ընտրութիւնները նախատեսուած են 2026թ. Յունիսին:

Ալէն Սիմոնեան նաեւ վստահ է, որ իշխող ուժը յատկապէս Օգոստոս 8-ի ունիւնութեան փաստաթուղթէն յետոյ անցողիկ չեմը յաղթահարելու խնդիր չունի: Ան նաեւ կը կարծէ, թէ աւելի շատ տոկոսային ներկայացուածութիւն պիտի ունենան, քան 2021թ. ընտրութիւններուն:

Հոկտեմբերի վերջը իշխող ուժէն յայտարարեցին, որ ՔՊ ցուցակին մէջ ընդգրկուիլ փափաքողները պէտք է ինքնապաշարժութիւն: Մէկ ամիս տեւած այս գործընթացէն յետոյ պարզ դարձաւ, որ ընտրական ցուցակին մէջ պիտի չըլլան «Քաղաքացիական Պայմա-



Աժ նախագահ Ալէն Սիմոնեան

նագրի» հնաբնակներէն Աժ փոխխօսնակ Յակոբ Արշակեանը, 2021-ին ՔՊ-ի ցուցակով պատգամաւոր դարձած նախկին գործարար Խաչատուր Սուքիասեանը, պատգամաւոր Քրիստինէ Պօղոսեանը, վարչապետի աներձագ Հրաչեայ Յակոբեանը: Անոնք պնդած էին, որ ատիկա իրենց որոշումն է:

Բայց պատգամաւոր դառնալու ցանկութիւն ունեցողներէն քանի մը ՔՊ-ականներ արդէն վարչութեան որոշմամբ դուրս մնացած են ընտրացուցակէն: Վարչութիւնը մերժեց Հայկ Սարգսեանը, Ճուլիեթա Ազարեանը, Հայկ Յիրունեանը եւ Կարէն Սարուկը, որ հրապարակային դժգոհած էր կուսակցութեան վերնախաւի որոշումէն, Հայկ Սարգսեանն էր:

Երեւանի Մէջ Եօթը Իրանցի Բերման Ենթարկուած Է Դեսպանատան Սօս Տեղի Ունեցած Ցոյցէն



Քանի մը տասնեակ իրանցիներ Երեւանի մէջ Իրանի դեսպանատան դիմաց բողոքի շարժում իրականացուցած են: Շարժումը արտօնուած եղած է Երեւանի քաղաքապետարանի կողմէ Յունուար 15-ին, սակայն Յունուար 16-ին թույլտուութեան որոշումը չեղարկուած է:

Բողոքին մասնակիցները որոշած էին դեսպանատան մօտէն երթով շարժիլ «Կապոյտ մզկիթ», սակայն բողոքի կարգը հսկող ոստիկանները շղթայ կազմած են եւ թույլ չեն տուած: Շարժումին մասնակիցներէն քանի մը հատը փորձած են ճեղքել ոստիկանական պատը: Եօթը անձ բերման ենթարկուած է:

«Երթն արտօնուած չէ, այդ իսկ պատճառով արգելուել է երթի

իրականացումը, ինչպէս նաեւ հաւաքի ընթացքում 7 անձ «վարչական իրաւախախտումների վերաբերեալ» օրէնսգրքի 182-րդ յօդուածով (Ոստիկանութեան ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար ենթարկուել են վարչական ձեռքարկման», - յայտնած է Ներքին գործերու նախարարութեան մամուլի խօսնակ Նարեկ Սարգսեանը:

Ցուցարարները վանկարկած են՝ «Մահ իրամենէիին», «Ազատութիւն Իրանին», «Ժողովրդավարութիւն Իրանին», «Կանգնեցէք Իրանի կողքին», «Կեցցէ Ռեզա շահը»: Ռեզա Փահլավիի նկարով պաստառներ պարգած են՝ «King Pahlavi» գրութեամբ:

Արտօնութիւններ Հայաստանի Մէջ Ելեկտրական Ինքնաշարժներու Ներմուծման



Հայաստանի Հանրապետութիւնը կը շարունակէ խթանել ելեկտրական շարժիչով փոխադրամիջոցներու ներմուծումն ու շահագործումը՝ կանաչ տնտեսութեան զարգացման եւ շրջակայ միջավայրի պահպանութեան ռազմավարութեան շրջանակին մէջ:

«Արմէնփրես»-ի թղթակիցի հետ գրոյցին ՀՀ Տնտեսութեան նախարարութեան գլխաւոր քարտուղար Հայկազ Նասիպեան նշեց, որ 2026 թուականին Հայաստանի Հանրապետութիւն առանց ներմուծման մաքսատուրքի կրնար են ներմուծուիլ 15.000 միաւոր ելեկտրական ինքնաշարժ:

Վիճակագրական տուեալներուն համաձայն՝ ելեկտրական շարժիչով փոխադրամիջոցների ներմուծման ծաւալները վերջին տարիներուն աճած են: 2023 թուակա-

նին ներմուծուած է 9635, 2024 թուականին՝ 11.793, իսկ 2025 թուականի Նոյեմբեր 30-ի դրութեամբ՝ 21.590 միաւոր ելեկտրական ինքնաշարժ: Համեմատութեան համար կը նշուի, որ 2019 թուականին համեմատ ներմուծման ծաւալները աճած է 17,6 անգամ: Այս տուեալները կը վկայեն, որ ելեկտրական ինքնաշարժի ներմուծման եւ շահագործման խթանման գործընթացը Հայաստանի մէջ կը շարունակուի աճող յարաշարժութեամբ:

Ելեկտրական ինքնաշարժներու թիւի աճին գուզահեռ կը զարգանայ նաեւ լիցքաւորման ենթակառուցուածքները: 2022 թուականին Հայաստանի մէջ գործած է 100 լիցքաւորման կայան, իսկ 2024 թուականի դրութեամբ անոնց թիւը գերազանցած է 300-ը:

ԼՈՒՐԵՐ

Ամէն Ինչ Պիտի Ընենք Եղբայրական Իրանի Բոլոր Մտահոգութիւնները Փարատելու Ուղղութեամբ. Փաշինեան



Վարչապետ Փաշինեան Կառավարութեան նիստէն ետք, կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

Մենք ամէն ինչ ըրած ենք, եւ պիտի շարունակենք ընել մեզի համար բարեկամական եւ եղբայրական իրանի բոլոր մտահոգութիւնները փարատելու ուղղութեամբ: Կառավարութեան նիստէն յետոյ ձեպագրուցի ժամանակ այս մասին ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ արձագանգելով իրանի դեսպանի յայտարարութիւններուն:

«Իրանից հնչող յայտարարութիւնների նկատմամբ մենք շատ ուշադիր ենք», - ըսաւ Փաշինեան:

Յունուար 14-ին Հայաստանի մէջ իրանի դեսպան խալիլ Շիրդոլ-լամին յայտնած էր, որ իրանին կ'անհանգստացնէ այն փաստը, որ Երեւանի մէջ իրանի դեսպանատան առջեւ բողոքի ցուցեր տեղի կ'ունենան:

«2018-ից յետոյ Հայաստանում երբեք ոչ մի տեղ հանրահաւաք չի արգելուել, մենք չենք կարող առանձին վերցրած մի դէպքում այլ կերպ վարուել: Այլ բան, որ մենք կ'իստմ ենք, որ արտա-յայտման ձեւերը չպէտք է խաթարեն ոչ ինչ, ոչ էլ այլ դեսպանատան աշխատանք», - ըսաւ Փաշինեան:

Վարչապետը վստահեցուց, որ պաշտօնական Երեւանը ուշադիր կը հետեւի իրանի մտահոգութիւններուն եւ ժողովրդավարական սկզբունքներու ծիրին մէջ պիտի ձեռնարկէ բոլոր միջոցները, որ բարեկամական եւ եղբայրական իրանի իսլամական Հանրապետութեան դեսպանատան գործունէութեան որեւէ խնդիր չառաջանայ:

Արտաքին Յետախուզութեան Ծառայութիւն. Ռազմական Սրումը Գրեթէ Անհաւանական Է, Բայց Պաքուն Աշխուժացուցած Է «Արեւմտեան Ատրպէյճանցիներու Վերադարձի» Թեման

Արտաքին Հետախուզութեան Ծառայութիւնը իր տարեկան զեկուցին մէջ կը պնդէ, որ «Ուաշինկթընի մէջ 2025 թուականի Օգոստոս 8-ին ձեռք բերուած համաձայնութեան արդիւնքներով 2026-ին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ռազմական սրումը դարձած է գրեթէ անհաւանական»:

Միաժամանակ, վարչապետին ենթակայ մարմինը կ'արձանագրէ, որ Ատրպէյճանի կողմէ յառաջ մղուող այսպէս կոչուած «արեւմտեան ատրպէյճանցիներու վերադարձի» խօսույթն ու գործողութիւններն կ'առաջացնեն վտանգներ եւ բացասաբար կ'ազդեն խաղաղութեան կառուցման վրայ:

Ծառայութեան տուեալները կը վկայեն, որ Ատրպէյճանը Ուաշինկթընեան հռչակագրէն յետոյ ոչ միայն չէ նուազեցուցած, այլեւ էականօրէն աշխուժացուցած է քարոզչութիւնը այս ուղղութեամբ, ինչ որ, ըստ զեկուցին, զգալի վտանգներ կը ստեղծէ երկարաժամկէտ խաղաղութեան համար: Իբրեւ ապացոյց, Արտաքին Հետախուզութեան Ծառայութիւնը ներկայացուցած է այսպէս կոչուած «Արեւմտեան Ատրպէյճանի» թե-

մայով ատրպէյճանական մամուլին մէջ տեղ գտած հրապարակումները, որոնք նախորդ տարուայ սկիզբին համեմատ, անցեալ տարուայ Օգոստոսէն մինչեւ Դեկտեմբեր իրական ժամանակահատուածին աճած են 36 տոկոսով:

Հաշուի առնելով այս հանգամանքը՝ Արտաքին Հետախուզութեան Ծառայութիւնը կը նշէ, որ իր առաջնահերթ խնդիրներէն պիտի ըլլայ շարունակաբար գնահատելը, թէ որն է Ատրպէյճանի կողմէ «արեւմտեան ատրպէյճանցիներու վերադարձի» յառաջ մղման պետական քաղաքականութեան իրական նպատակը:

«Գնահատման է ենթակայ մասնաւորապէս այն, թէ արդեօք Ատրպէյճանը այդ թեմաները, նոր ազգային գաղափարախօսութիւն դարձնելով, մտադիր է որեւէ նոր ձեւաչափով հակամարտութիւնը տեղափոխել Հայաստանի տարածք, թէ՞ այսպէս կոչուած «արեւմտեան ատրպէյճանցիների վերադարձի» այս խօսույթն Ատրպէյճանի արտաքին քաղաքական սակարկման եւ մասնաւորապէս՝ Ղարաբաղի հայերի վերադարձի թեմային հակադրելու գործիքակազմի մաս է»:

Յոյս Ունինք, Որ Շուտափոյթ Կ'իրականացուի Թուրքիոյ Հետ 2022-ին Ձեռք Բերուած Պայմանաւորութիւնը. Ռուքիսեան

Յոյս ունինք, որ շուտափոյթ կ'իրականացուի Թուրքիոյ հետ 2022-ին ձեռք բերուած պայմանաւորութիւնը՝ բանալ սահմանը երրորդ երկիրներու եւ դիւանագիտական անցագրերով քաղաքացիներուն համար: Ազգային ժողովին մէջ ձեպագրուցի ժամանակ յայտնեց խորհրդարանի փոխխօսնակ Ռուքիսեան:

Այս ծիրին մէջ անդրադառնալով սահմանի հնարաւոր բացման ժամկէտերուն՝ Ռուքիսեան նշեց, որ մանրամասնութիւններ չի կրնար յայտնել, փոխարէնը ակնարկեց, որ այժմ Թուրքիան կը վերականգնէ Հայաստանի հետ սահմանի «Ալիճանի» անցակէտը:

«Հայաստան-Թուրքիա կարգաւորման գործընթացում փորձըցոյց է տալիս, որ աւելի լաւ է ինչ-որ բան լինի, յետոյ յայտարարենք այդ մասին», - ըսաւ Ռուքիսեան:

Աժ փոխխօսնակը ընդգծեց, որ հայկական կողմին դիրքորոշումը մշտապէս եղած է այն, որ ըլլան ամբողջապէս բաց սահմաններ եւ հաստատուած դիւանագիտական յարաբերութիւններ՝ վաղը:

Օրեր առաջ թրքական պետական մամուլը գրած էր, որ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանին գտնուող «Ալիճանի» սահմանային անցակէտին վրայ աշխատանքները 90 տոկոսով աւարտած են:

Կը հաղորդուի, որ «Ալիճան» սահմանային անցակէտին մաքսային եւ այլ ընթացակարգերու համար շէնքեր կը կառուցուին: Սահման տանող ճանապարհին տեղադրուած են գովազդա-



Խորհրդարանի փոխխօսնակ Ռուքիսեան Ռուքիսեան

չին վահանակներ եւ պաստառներ՝ Հայաստանէն ժամանողներուն իգիւրն ու տարածաշրջանը ներկայացնելու համար:

Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ ցամաքային սահմանը միակողմանի փակուած է Անքարայի կողմէ 1993-ին՝ Արցախեան առաջին պատերազմին ժամանակ: 2021-էն սկսեալ՝ երկու երկիրները վերսկսած են դիւանագիտական շփումները յատուկ ներկայացուցիչներու, արտաքին գործերու նախարարներու եւ երկիրներու ղեկավարներուն մակարդակով:

Ալիճան-Մարկարա կամուրջը կարճ ժամանակով բացուած է 2023-ի փետրուարին, երբ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած երկրաշարժէն յետոյ Հայաստանը մարդասիրական օգնութիւն եւ փրկարարական ջոկատներ ուղարկեց Թուրքիա:

«ԵՄ-ն Ամէն Կերպ Կը Փորձէ Վնասել ԵԱՏՄ-ին». Կ'ըսէ Լաւրով

ԵՄ-ն ամէն կերպ կը փորձէ վնասել ԵԱՏՄ-ին, այդ կը վերաբերի նաեւ Հայաստանի նկատմամբ իր քաղաքականութեան: Այս մասին յայտնած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով 2025 թուականի ամփոփիչ մամուլի ասուլիսի ժամանակ:

«ԵՄ-ն ամէն կերպ կը փորձէ վնասել ԵԱՏՄ-ին, այդ շարքին՝ բոլորին յայտարարելով, որ Եւրոմիութեան անդամակցութիւնը պէտք է առաջնահերթութիւն ըլլայ բոլոր անոնց համար, որոնք կ'ուզեն բնական զարգանալ, որոնք կը մտածեն իրենց ժողովուրդին մասին: Հիմա, ինչպէս գիտէք, Հայաստանը «կը փաղաքչեն», - ըսած է Լաւրով:



Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով

Անոր խօսքով՝ բազմիցս քննարկուած է ԵԱՏՄ-ի հետ ԵՄ-ին անդամակցութեան անհամատեղելիութեան հարցը իր հայ գործընկեր Արարատ Միրզոյեանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:

«Այս յայտարարութիւնները մեզ թիւրիմացութեան մէջ կը դնեն: ԵՄ-ի հետ մերձեցումը առանց հետքի չ'անցնիր: ԵՄ-ն անընդհատ կը խօսի «Ռուսաստանի կողմէ եկող հիպոթետիկ սպառնալիքներու» մասին: ԵՄ-ն միջոցներ կը տրամադրէ անոր համար՝ վերծնուցելու է 15 միլիոն եւրոյի փոխատուութիւն: Ձեմ կասկածիք, որ պրիւսիական դիւանակալութիւնը

պիտի ստիպէ մեր հայ ընկերներուն հատուցել այս փոխատուութեան իւրաքանչիւր կոպեկի դիմաց», - նշած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարարը:

Ան յաւելած է, որ արտաքին քաղաքական ընթացքի ընտրութիւնը հայ ժողովուրդին եւ երկրի ղեկավարութեան ինքնիշխան իրաւունքն է, սակայն երկու միաւորումներուն միաժամանակ անդամակցիլը բացառուած է:

Լաւրովի խօսքով՝ Մոսկուան նաեւ մտահոգութեամբ կը հետեւի Հայ Առաքելական եկեղեցւոյ շուրջ տեղի ունեցող զարգացումներուն:

Նիկոլ Փաշինեանին Պիտի Յանձնուի «Զայետ» Մարդկային Եղբայրութեան 2026-ի Մրցանակը՝ Ի Նշանաւորում Խաղաղութեան Հաստատման



«Զայիտ» մրցանակի խորհուրդը վարչապետ Փաշինեանին կը հրաւիրեն ներկայ գտնուելու մրցանակաբաշխութեան

Մարդկային եղբայրութեան «Զայետ» մրցանակը յայտարարած է 2026 թուականի մրցանակակիրները: Այս մասին յայտնած է ՀՀ կառավարութիւնը:

«Մրցանակի յանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ խաղաղութեան եւ միջպետական յարաբերութիւնների հաստատման համաձայնագիրը արժանանում է բարձր գնահատանքի՝ որպէս երկու պետութիւնների կողմից իրականացուող խաղաղութեան, երկխօսութեան, յարաբերութիւնների կարգաւորման եւ հակամարտութեան լուծման գործընթաց: Այն ընդգծում է, որ հաշտեցումը մէկանգամեայ գործողութիւն չէ, այլ շարունակական եւ հետեւողական ուղի:

««Զայետ» մարդկային եղբայրութեան մրցանակի գլխաւոր քարտուղար Մուհամմատ Ապտելլասալամը ընդգծել է Նիկոլ Փաշինեանի շարունակական, հետեւողական եւ սկզբունքային ջանքերը՝ ուղղուած խաղաղութեան հաստատմանն ու ամրապնդմանը:

«Մրցանակը վարչապետ Նի-

կոլ Փաշինեանին կը յանձնուի Փետրուարին Ապրիլ Տապիւում:

«2026 թուականի մրցանակակիրները ընտրուել են անկախ, համաշխարհային մակարդակի դատաւորական յանձնաժողովի կողմից, որը բաղկացած է երկխօսութեան եւ համակեցութեան ոլորտում ճանաչուած հեղինակաւոր գործիչներից եւ փորձագէտներից:

«Յանձնաժողովի անդամներն են՝ Եւրոպական խորհրդի նախկին նախագահ եւ Պելճիքայի Թագաւորութեան նախկին վարչապետ Շարլ Միշէլ, Ափրիկեան միութեան յանձնաժողովի նախկին նախագահ եւ Չատի Հանրապետութեան նախկին վարչապետ Մուսա Ֆակի Մահմաթ, Սուրբ Աթոռի Մշակույթի եւ կրթութեան բաժանմունքի պետ կարտինալ Ժոզէ Թոլենթինօ տէ Մենտոնսա, ԵՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրէն Քեթրին Ռասէլ, Ուզպէքիստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի ղեկավար Սաիտա Միրզիտեա, ինչպէս նաեւ Մարդկային եղբայրութեան «Զայետ» մրցանակի գլխաւոր քարտուղար, դատաւոր Մուհամմատ Ապտելլասալամը», - կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:

ՀՀ ՄԻՊ-ը Զրոյցներ Ունեցած Է Ատրպէյճանէն Վերադարձած 4 Հայ Գերիներուն Հետ



Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպան Անահիտ Մանասեանն ու ՄԻՊ ներկայացուցիչները հանդիպումներ եւ խորհրդակցական առանձնագրոյցներ ունեցած են Ատրպէյճանէն Հայաստան վերադարձուած Վազիֆ Խաչատրեանի, Գէորգ Սուլջեանի, Դաւիթ Դաւթեանի եւ Վիգէն Էօլճէքճեանի հետ:

Քննարկուած են մարդու իրաւունքներուն առնչուող հարցեր:

Մարդու իրաւունքներու պաշտպանը Վազիֆ Խաչատրեանին տեսակցած է «Նորք-Մարաշ» բժշկական կեդրոնին մէջ: Բժշկական կեդրոնի տնօրէն Միքայէլ Աղամեանի հետ Պաշտպանը քննարկած է անձի բժշկական օգնութեանն ու սպասարկման իրաւունքին առնչուող հարցեր եւ շնորհակալութիւն յայտնած է բժշկական անձնակազմին՝ մասնագիտական եւ բարեխիղճ աշխատանքի համար:

Թրամփ Փաշինեանը Հրաւիրած Է Միանալու Խաղաղութեան Խորհուրդին Որպէս Հիմնադիր

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ստացած է ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի պաշտօնական հրաւերը՝ խաղաղութեան խորհուրդին որպէս հիմնադիր անդամ միանալու վերաբերեալ: Այս մասին յայտնած է վարչապետի մամուլի խօսնակ Նազելի Բաղդասարեանը:

«Վարչապետ Փաշինեանը սիրով եւ պատասխանատուութեամբ ընդունել է առջարկը՝ վերահաստատելով Հայաստանի յանձնառութիւնը խաղաղութեան առջնորդմանը», - գրած է Բաղդասարեան:

Խաղաղութեան խորհուրդը միջազգային նոր հարթակ է, որու ստեղծման մասին Տոնալտ Թրամփի պաշտօնապէս յայտարարած է Յունուար 16-ին: Կառոյցին հիմնական առաքելութիւնը կազմի հատուածի յետպատերազմեան վերակառուցման, ապառազմականացման եւ տարածաշրջանային

կայունութեան ապահովման կառավարումն է:

Թրամփ այս նախաձեռնութիւնը ներկայացուցած է որպէս Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ալլընտրանքային, աւելի գործնական եւ արդիւնաւէտ ձեւաչափ, որ պէտք է գործէ անմիջականօրէն իր վարչակազմի հովանիին ներքոյ:

Ըստ Թրամփի յայտարարութիւններուն՝ խորհուրդը պիտի ըլլայ «երբեւէ ստեղծուած ամենահզօր մարմինը», որուն կանոնադրութիւնը նախատեսուած է ստորագրել 2026-ի Յունուար 22-ին, Տաւոսի մէջ:

Խորհուրդի գործադիր կազմին մէջ պիտի ընդգրկուին ԱՄՆ պետական քարտուղար Մարք Ռուպիօն, նախագահի խորհրդական ձաւրեւ Քուշները, Մեծ Բրիտանիոյ նախկին վարչապետ Թոնի Պլեյըր եւ Համաշխարհային դրամատան նախագահ Աճայ Պանկան:

Անկայունութեան Համաշխարհային Միջավայրին մէջ Մենք Յաջողեցանք Կայունութիւն Բերել Տարածաշրջանին. Աս Քարտուղար

Հայաստանը յաջողած է անկայունութեան համաշխարհային միջավայրին մէջ կայունութիւն բերել տարածաշրջանին եւ երկրին համար լայն հնարաւորութիւններ բանալ:

Նման համոզմունք յայտնեց ՀՀ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան՝ «Հայաստանը եւ խաղաղութիւնը վտանգներու եւ հնարաւորութիւններու խաչմերուկին» խորագրով անվտանգային համագումարի շրջանակին մէջ:

Անդրադառնալով հարցումին, թէ տարածաշրջանային եւ համաշխարհային անորոշութիւնները ի՞նչ ազդեցութիւն կրնան ունենալ Հայաստանի եւ անոր անվտանգային միջավայրին վրայ՝ Գրիգորեան պատասխանեց, որ Հայաստանի հետ կապուած, նաեւ աշխարհի մէջ տեղի ունեցող գործընթացները, որոնք աւելի շատ անորոշութիւններ ստեղծած են, ստիպել են աւելի աշխուժ աշխատիլ՝ առնուազն Հայաստանի շուրջ իրողութիւնները աւելի կայուն եւ կանխատեսելի դարձնելու համար:

«Համոզուած եմ, որ մեզ ջաջողուել է դա անել: Իսկապէս, Օգոստոսի 8-ով խաղաղութիւն է հաստատուել մեր տարածաշրջանում, հիմա խնդիրն այն է, որ մենք հաստատութեանական դարձնենք խաղաղութիւնը: Հաստատութեանական դարձնել ասելով մենք հասկանում ենք ե՛ւ ապաշրջափակումը, ե՛ւ երէկ շատ կարեւոր իրադարձութիւն տեղի ունեցաւ TRIPP-ի հետ կապուած Ուաշինկթընում, բացի դրանից՝ նաեւ խաղաղութեան պայմանագրի ստորագրումը եւ վաւերացումը: Քանի որ նախաստորագրում է եղել, անհրաժեշտութիւն կայ, որ խաղաղութեան պայմանագիրը ստորագրենք եւ վաւերացնենք, որով նաեւ կը շարունակենք խաղաղութեան հաստատութեանականացման գործընթացը», - ըսաւ ԱԽ քարտուղարը:

Խաղաղութեան հաստատութեանականացման լոյսին տակ ան ընդգծեց նաեւ Հայաստան-Ատրպէյճան



ՀՀ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

յարաբերութիւններու փոփոխութիւնը, որ տեղի ունեցած է վերջին քանի մը ամիսներու ընթացքին՝ ապաշրջափակման լայն առումով: «Վերացուել է Ատրպէյճանի տարածքով Հայաստան եկող ապրանքների սահմանափակումը, հնարաւորութիւն կայ եւ Ատրպէյճանի տարածքը օգտագործել, եւ Ատրպէյճանից ապրանքներ բերել Հայաստան, որն ամբողջովին տարածաշրջանը փոխել է: Անկայունութեան համաշխարհային միջավայրում մեզ յաջողուել է կայունութիւն բերել տարածաշրջանին եւ Հայաստանի համար լայն հնարաւորութիւններ բացել», - ընդգծեց ԱԽ քարտուղարը:

Ըստ անոր՝ այդ հնարաւորութիւններուն մէկ մասը կը վերաբերի տնտեսութեան: Գրիգորեան, նայելով տնտեսական աճի թիւերուն, զբօսաշրջիկներու այցերու թիւերուն, կը կարծէ, թէ տնտեսութիւնը շատ դրական արձագանգած է:

«Դրանք բոլորը ցոյց են տալիս, որ Հայաստանում եւ տարածաշրջանում մեծ հնարաւորութիւններ են ստեղծուել, եւ կայ կայունութիւն: Գիտէք, որ կայունութեան ամենաշատն արձագանգում է փողը: Տարբեր ուղղութիւններով կան այդ կայունութեան ազդակները», - նշեց Գրիգորեան:

Յովնան Արք. Տերտերեան - Եկեղեցւոյ Բարեկարգութիւնը Որպէս Անյետաձգելի Հրամայական



Ստորեւ ներկայացուած գրութեամբ, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեան յաւելեալ բացատրութիւններ կը տրամադրէ ներեկեղեցական կեանքը փոթորկող մերօրեայ խնդիրներու մասին: Այն պատճառները, որոնք դրդած էին զինք միանալու բարենորոգութեան ծրագրին, արդէն իսկ բազում անգամներ եւ տարբեր առիթներով հանրայնացուած են:

Նկատի առնելով հանրային հետաքրքրութիւնը եւ հարցին հնչեղութիւնը՝ նպատակայարմար նկատուեցաւ գրութիւնը հրապարակումէն առաջ նախ բաժնել թեմի եկեղեցականներուն հետ: Այդ նպատակով, Յունուար 15-ին, Առաջնորդարանի »Արմէն Համբար« սրահին մէջ գումարուեցաւ արտահերթ եւ բացառիկ հոգեւորականաց ժողով:

Հանրութեան կը ներկայացնենք փաստաթուղթը իր ամբողջութեան մէջ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

«Տիրոջ տան հանդէպ նախանձախնդրութիւնը կլանեց զիս» (Սաղմոս 68:10):

Կարգ մը ազնիւ եւ բարեպաշտ հաւատացեալներ իրենց արդարացի մտահոգութիւնը կը յայտնեն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ ներքին կեանքը խաթարող աղմկայարոյց դէպքերու առնչութեամբ:

Նախ վասն արդարութեան հարկ է նշել, որ մենք քանիցս կոչով դիմած ենք բարեպաշտ մեր ժողովուրդին (i), որով հարցերը ընդհանուր հոգեւոր-բարոյական ծիրին մէջ պահած ենք: Այնուամենայնիւ, չանտեսելով մեր սիրեցեալ ժողովուրդի հարցումները, կ'ուզենք յստակեցնել, թէ մենք ինչո՞ւ միացած ենք բարեկարգման օրակարգին, եւ ինչո՞ւ հիմա:

Բարեկարգութիւնը կամ բարենորոգումը ներեկեղեցական օրակարգ է 5-րդ դարէն սկսեալ: Կարգ ու կանոնի, բարեվարքութեան, եկեղեցւոյ կառավարման, հովուական ծառայութեան, հոգեւոր կրթութեան եւ եկեղեցւոյ ճշմարիտ առաքելութեան մասին զանազան եկեղեցական ժողովներ գումարուած են եւ որոշումներ առնուած (ii):

Իր պատմական նախնութեանը ունեցող բարենորոգութեան ծրագիրը նոր թափ ստացաւ նախորդ տարի՝ ի լրումն ժամանակի, որպէս պոռթկում եւ յուսահատութեան ճիչ՝ ի տես աննախադէպ անարդարութիւններու եւ բարոյական լուրջ անկումներու:

Մենք միացանք այս շարժմանը, որովհետեւ՝

1. Վեհափառ Հայրապետը, անտես առնելով իր իսկ ստեղծած յանձնախումբի կարծիքը եւ փորձաքննութիւններուն եզրակացութիւնը, պարտակեց Արշակ Արքեպիսկոպոսի մասնակցութեամբ ան-

պարկեշտ դէպք:

2. Յաւալիօրէն իրազեկուեցանք, թէ ինչպէ՞ս Վեհափառ Հայրապետը էր 44-օրեայ պատերազմի նահատակ հերոսի եղբօր՝ կարգալոյծ Աղան Աբեղային, իր սգացեալ մօրը հետ մասնակցելու իշխանութիւններու դէմ քաղաքական ընդդիմադիր ցոյցի:

3. Վեհափառ Հայրապետը որեւէ ձեւով չարձագանգեց իր կուսակրօնութեան ուխտը խախտած ըլլալու եւ զաւակ ունենալու հանրային պնդումին:

4. Վեհափառ Հայրապետը լուռ մնաց, երբ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը փաստեր հրապարակեց իր եղբօր՝ Եղրաս Արքեպիսկոպոսի օտարերկրեայ գործակալ ըլլալու մասին:

5. Մայր Աթոռը՝ յանձինս Վեհափառ Հայրապետի, կը շարունակէ ոչ թափանցիկ եւ անհաշուետոտողաբան գործելաոճը՝ առանց ելեւմտից տեղեկագրերու, ըլլալ Մայր Տաճարի նորոգութեան, արցախահայտութեան օժանդակութեան, կարիքաւոր եկեղեցականներու օգնութեան եւ կամ այլ կրթական ու բարեգործական ծրագրերու վերաբերեալ:

6. Մենք, որպէս Մայր Աթոռի կողմէ ստեղծուած կանոնադրական բարեփոխումներու յանձնախումբի ատենապետ, տարիներ շարունակ աշխատեցանք թեմակալ առաջնորդներու եւ եպիսկոպոսներու հետ եւ համակարգեցինք կանոնադրութիւններու մշակումը: Այդ կանոնադրական նախագծերը այդպէս ալ թուղթի վրայ մնացին, քանի որ ՀՀ րաւիւրուեցաւ Ազգային-Եկեղեցական ժողով՝ զանոնք վաւերացնելու:

7. Կանոնադրութեան չգոյուլթեան պայմաններուն տակ Վեհափառ Հայրապետը նախընտրեց եկեղեցւոյ կառավարման միանձնեայ գործելաոճը՝ կամայական որոշումներ առնելով եւ իր անձին հպատակ

ձեւական յանձնախումբեր ստեղծելով: Աւելին, Վեհափառ Հայրապետը կ'ոտնահարէ եպիսկոպոսի մը իր վիճակին մէջ քահանայ ձեռնադրելու առաքելական իրաւունքը, որ լուրջ աստուածաբանական-շնորհաբանական հարց է:

8. Վեհափառ Հայրապետը քաղաքականացուցած է եկեղեցին՝ հակադրուելով պետութեան որդեգրած խաղաղութեան օրակարգին:

9. Ինչպէս որ շատեր կը պնդեն, Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռը լրատուական ընդլատակեալ արշաւ կը մղէ զինք քննադատողներուն դէմ՝ վարկաբեկելով հեղինակութիւններ:

10. Վերջին տարիներու անհեռատես գործունէութիւնը ոչ միայն տկարացուցած է մեր սրբութիւն սրբոց Մայր Աթոռը, այլեւ հեղինակագրկած է Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին: Ան հեռացած է ժողովուրդէն՝ մատնելով զանոնք աղանդներու ճիրաններուն:

11. Ի վերջոյ, մեզի համար անընդունելի է Մայր Աթոռի եւ անձամբ Վեհափառ Հայրապետի հակապետական դիրքորոշումն ու առճակատումը:

Ասոնք են գլխաւոր պատճառները, որոնք դրդած են մեզ միանալ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ բարեկարգութեան ծրագրին՝ որպէս հաւատարիմ եւ ուխտապահ զաւակ Մայր Աթոռի, ի սէր էջմիածնի եւ ի շինութիւն հայրենի պետականութեան:

Շատեր դրդուած քաղաքական զանազան կեդրոններէ կը թիրախաւորեն, կ'ամբաստանեն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ բարենորոգութեան ջատագովները: Ասպարէզի վրայ են հանկարծ քրիստոնեայ դարձած եւ ինքզինքնին «հաւատացեալ» յորջորջող «արմատականներ», որոնց ծայրայեղականութիւնը ո'չ թէ արդիւնք է սիրոյ ու հաւատարմութեան, այլ՝ արգասիքը իրենց ատելալատ ընդդիմադիր հոգիին:

Դաւադրութիւններու տեսութեան սիրահարներու եւ յատկապէս անոնց համար, որոնք քաղաքական աստու կու տան եկեղեցւոյ բարեկարգման այս շարժումին, վերստին պիտի յիշեցնենք, որ ասիկա քաղա-

քական իշխանութիւններու մտայնացումը է: Աստուած մարգարէի բերնով կ'ըսէ. «Ուղղեցէք ձեր ճամբաները եւ բարեկարգեցէք ձեր գործեր եւ Ես ձեզի հետ պիտի բնակիմ այստեղ: Մի՛ վստահիք սուտ խօսքերուն, թէ իբր ասիկայ է Տիրոջ Տաճարը» (Երեմիա 7:3-4):

5-8-րդ դարերու բարենորոգութիւնը կանոնադրական պահանջով ուղղորդուած էր. «Քահանան լաբեղայ, վարդապետ, եպիսկոպոս եւ կաթողիկոս», որ չի խնամում իրեն, չի կարող խնամել իրեն յանձնուած հոգիները» (Ներսէս Շնորհալի, Թուղթ եպիսկոպոսներին, Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, Երեւան, 1984, էջ 214):

12-րդ դարուն բարեկարգութիւնը բարոյական հրամայական էր. «Եկեղեցու պակասը ոչ թէ հաւատքի մէջ է, այլ սպասաւորների թուլութիւն» (Ներսէս Շնորհալի, Թուղթ եպիսկոպոսներին, Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, Երեւան, 1984, էջ 219):

14-15-րդ դարերուն շարժման հիմնապատճառները աստուածաբանական, վարդապետական էին. «Քահանայի լաբեղայ, վարդապետ, եպիսկոպոս եւ կաթողիկոս» անգիտութիւնը ժողովրդի կորստեան սկիզբն է» (Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Երեւան, 1997, էջ 347):

17-18-րդ դարերուն վարչական բարեփոխման կարիքն ակնյայտ էր. «Առանց ուսման եւ կանոնի եկեղեցին չի կարող կանգուն մնալ» (Սիմէոն Երեւանցի, Կոնդակ թեմեքին, Երեւան, 1973, էջ 112):

19-րդ դարուն հաստատութեան ինքնութեան եւ առաքելութեան պահպանումը դարձաւ բարեկարգութեան հիմնական ուղղութիւն. «Եկեղեցու զօրութիւնը իր կրթութեամբ սպասաւորների մէջ է» (Գէորգ Ե. Սուրենեանց, Կոնդակ, էջմիածին, 1905, էջ 37):

20-րդ դարուն շարժման հիմնական շեշտադրութիւնը հովուական ծառայութեան վրայ էր. «Եթէ քահանան լաբեղայ, վարդապետ, եպիսկոպոս եւ կաթողիկոս» ժողովրդի ցաւը չգիտի, նրա աղօթքը դատարկ է» (Մկրտիչ Խրիմեան, Քարոզ, Երեւան, 1980, էջ 58):

ԱՄՆ-Ը Ու Հայաստանը Հրապարակած Են

Շարունակուած էջ 1-էն

են եւ անքննելի», - կը նշուի յայտարարութեան մէջ:

Նման հաւաստիացումներ տուած է նաեւ Ռուպիոն, երբ Պետական Քարտուղարութեան մէջ Միլոզոյեանը ընդունելէ անմիջապէս յետոյ կարճ մեկնաբանութիւն տուած է լրագրողներուն:

«Մէկ կողմէ [TRIPP-ը] կը բանայ Հայաստանը առեւտուրի համար եւ թոյլ կու տայ անոր տնտեսապէս բարգաւաճիլ, բայց ատիկա կը կատարուի այնպէս, որ որեւէ կերպ չի խախտեր Հայաստանի ինքնիշխանութիւնը», - ըսած է Ռուպիո: «Այստեղ ինքնիշխանութեան խնդիր չկայ, նախագիծը լիովին կը յարգէ զայն»:

Յայտարարութեան մէջ կը նշուի, որ TRIPP զարգացման ընկերութիւնը մասնաւոր գործավարներ պիտի վարձէ, որոնք պիտի մատուցեն «յաճախորդ-

ներու հետ առերես ծառայութիւններ», այդ շարքին՝ «փաստաթուղթերու նախնական հաւաքագրման ստուգման համար», ինչպէս նաեւ պիտի զանձեն տարանջման վճարներ բեռներու եւ ուղեւորներու համար: Միեւնոյն ժամանակ հայ պաշտօնեաները պարտաւոր են «Ֆիզիքական ներկայութիւն պահպանել Հայաստանի բոլոր սահմանային եւ մաքսային հաստատութիւններուն մէջ», ընդունիլ «մաքսային վերջնական որոշումներ եւ ձեւակերպումներ» եւ իրականացնել «տեղաշարժի վերահսկողութիւն»:

Համատեղ յայտարարութեան մէջ նաեւ կը նշուի «փաստաթուղթերու ելեկտրոնային ներկայացման եւ մշակման» մասին եւ կոչ կ'ընէ կիրառելու «տարբերակուած գործընթացներ մարդոց, փոխադրամիջոցներու եւ բեռներու համար, այդ շարքին՝ Ատրպէյճանի եւ Նախիջեւանի միջեւ»:

U.S. and Armenia Announce Release of TRIPP Implementation Framework Statement

“Trump Route” Project Does Not Undermine Armenia’s Sovereignty, Says Marco Rubio



WASHINGTON, DC — Secretary of State Marco Rubio and Foreign Minister of Armenia Ararat Mirzoyan met today in Washington, D.C., to announce the release of the Trump Route for International Peace and Prosperity (TRIPP) Implementation Framework. This document, published below, is the latest step toward fulfilling the commitments made at the White House on August 8, 2025, to advance the cause of lasting peace in the South Caucasus.

The Framework outlines a concrete path to operationalize the TRIPP, which is intended to establish unimpeded, multimodal transit connectivity on the territory of Armenia. While connecting the main part of Azerbaijan

and its Nakhchivan Autonomous Republic and creating a vital link in the Trans-Caspian Trade Route, the TRIPP is expected to generate reciprocal benefits for international and intra-state connectivity for the Republic of Armenia.

Reflecting the principles affirmed at the historic August 8, 2025, Peace Summit hosted by President Trump, the TRIPP Implementation Framework underscores the importance of sovereignty, territorial integrity, and reciprocity to the overall success of the TRIPP. The ultimate objective of the TRIPP is to strengthen the prosperity and security of Armenia and Azerbaijan and further American commerce by expanding regional trade and connectivity as well as create new transit

opportunities linking Central Asia and the Caspian to Europe.

During the meeting, the two officials expressed satisfaction with the strong momentum in the development of the Armenia–U.S. strategic partnership, highlighting the active implementation of existing agreements, joint initiatives, and future prospects for cooperation.

Minister Mirzoyan and Secretary Rubio discussed the progress made in implementing the agreements reached at the Washington Peace Summit held on August 8, 2025. Both sides underscored the importance of further institutionalizing peace and reviewed *steps being taken in that direction*.

The “Trump Route” project in no way violates Armenia’s sovereignty, Marco Rubio stated during the meeting with Mirzoyan i.

“The ‘Trump Route’ project does not undermine Armenia’s sovereignty in any way. It opens Armenia to trade and enables the country to prosper economically,” Rubio said. “There is no issue of sovereignty here—on the contrary, it reflects respect for that sovereignty.”

Rubio noted that bilateral relations continue to strengthen both within the framework of the joint statement on the Armenia–U.S. implementation framework for the “Trump Route for

International Peace and Prosperity” (TRIPP) project, as well as through arrangements outside the TRIPP framework.

He described the TRIPP project as a potential model for the international community. “We truly believe that the TRIPP—Trump Route—arrangement can become a global model for how countries can open themselves to economic activity and prosperity without in any way calling into question or undermining their sovereignty or territorial integrity,” Rubio said.

According to the Secretary of State, the project will be beneficial for Armenia, the United States, and all parties involved. He emphasized that important steps are being taken today to fulfill commitments aimed at advancing the initiative.

Foreign Minister Mirzoyan and Secretary Rubio met in Washington on January 13 to announce the implementation framework for the “Trump Route for International Peace and Prosperity” (TRIPP) project. As noted by Armenia’s Ministry of Foreign Affairs, the document represents “a new step toward implementing the commitments reached at the White House on August 8, 2025, in support of achieving lasting peace in the South Caucasus.”

Azerbaijan Returns Four Armenian

Detainees to Armenia



YEREVAN — Azerbaijan has returned four Armenian detainees to Armenia, Prime Minister Nikol Pashinyan announced.

“Gevorg Sujyan, Davit Davtyan, Vigen Eoljekjian, and Vagif Khachatryan were just handed over at the Hakari Bridge by representatives of the relevant authorities of the Republic of Azerbaijan to representatives of the Republic of Armenia and are now on Armenian territory,” the prime minister stated.

According to Pashinyan, prelimi-

nary medical examinations show that Gevorg Sujyan, Davit Davtyan, and Vigen Eoljekjian have no health issues, while Vagif Khachatryan’s condition is assessed as satisfactory. “They are being transported to Yerevan,” he added.

In a statement, Armenia’s National Security Service said the process was carried out as a practical outcome of the peace established between the Republic of Armenia and the

First Batch of Pinaka Rockets Delivered

to Armenia: The Times of India



NEW DELHI — The first batch of rockets for the Pinaka multi-barrel rocket launch system has been delivered to Armenia, according to The Times of India. A ceremonial dispatch marking the shipment took place on Sunday in Nagpur, India. India’s Minister of Defense, Rajnath Singh, attended the event commemorating the delivery of the weapons to Armenia.

Addressing those present, the minister described the delivery as a “turning point for India’s defense industry,” noting that it reflects the

country’s efforts to enter the global arms market.

The guided rockets, manufactured by Solar Defense and Aerospace Limited (SDAL) in Nagpur, have a range of up to 70 kilometers. Indian media reports indicate that deliveries of the Pinaka multi-barrel rocket systems to Armenia were carried out during 2023–2024.

The outlet notes that Armenia had previously signed a contract worth

Continued on page3

Continued on page3

Amid Global Instability, We Succeeded in Bringing Stability to the Region, Says Security Council Secretary

YEREVAN — Armenia has succeeded in bringing stability to the region amid a globally unstable environment, opening broad opportunities for both the region and the country, Secretary of Armenia’s Security Council Armen Grigoryan said.

Grigoryan made the remarks during a security forum titled “Armenia and Peace at the Crossroads of Risks and Opportunities.”

Responding to a question about the impact of regional and global uncertainties on Armenia and its security environment, Grigoryan said that developments related to Armenia, as well as broader global processes that have generated increased uncertainty, have compelled the country to work more actively to make the situation around Armenia at least more stable and predictable.

“I am convinced that we have succeeded in doing so. Indeed, as of August 8, peace has been established in our region. The task now is to institutionalize that peace,” Grigoryan said. “By institutionalization, we mean both unblocking communications and, as well, the very important development that took place yesterday in Washington related to TRIPP. In addition, this includes the signing and ratification of a peace treaty. Since a preliminary agreement has already been reached, there is a need to sign and ratify the peace treaty, thereby continuing the process of institutionalizing peace.”

In this context, Grigoryan also highlighted recent changes in Armenia–Azerbaijan relations over the past several months, particularly with regard to unblocking. “Restrictions on



goods entering Armenia through Azerbaijan have been lifted. There is now the possibility to use Azerbaijani territory and to import goods from Azerbaijan to Armenia, which has completely transformed the region. In a globally unstable environment, we have managed to bring stability to the region and open wide opportunities for Armenia,” he emphasized.

According to Grigoryan, some of these opportunities relate directly to the economy. Pointing to economic growth figures and the number of tourist visits, he said the economy has responded very positively.

“All of this shows that significant opportunities have emerged in Armenia and the region, and that stability exists. You know that money responds most strongly to stability. There are clear signals of that stability across various sectors,” Grigoryan noted.

He stressed the importance of the opportunities created by stability and assured that Armenia will continue working consistently in this direction.

U.S. Company to Oversee TRIPP for 49 Years, with Possible 50-Year Extension, Mirzoyan Says

WASHINGTON, DC — Armenia’s Foreign Minister Ararat Mirzoyan responded to media questions in Washington following the publication of the joint statement on the Armenia–U.S. implementation framework for the “Trump Route for International Peace and Prosperity” (TRIPP) initiative, providing further details on the agreement.

The foreign minister repeatedly emphasized that TRIPP will be implemented under the full sovereignty of the Republic of Armenia—a point that is referenced several times in the documents, including in the text of the joint statement itself.

Mirzoyan also noted that a U.S. company will initially be responsible for TRIPP for a period of 49 years, with the possibility of an additional 50-year extension. Armenia will grant development rights for the implementation of the TRIPP project, but no Armenian land will be alienated as part of the process.

“The distribution of shares reflects the scale of the countries’ investments. Armenia intends to offer the United States a 74 percent stake in the TRIPP development company,



while retaining 26 percent for Armenia,” Mirzoyan said.

“It is no secret that the United States will make substantial investments—not only political, but also financial. Armenia’s primary contribution, broadly speaking, is the development right. I believe this is a fairly equitable distribution,” he added.

According to Mirzoyan, the current arrangement applies to the initial 49-year period. “If the agreement is extended for another 50 years, the shareholding proportions will change, and the sides will become nearly equal,” the foreign minister said.

Fidan Did Not Speak of Supporting Armenia’s Elections: What Turkey’s Foreign Minister Actually Said — FIP



Turkey’s Foreign Minister Hakan Fidan addressed regional issues, Armenia–Azerbaijan and Armenia–Turkey relations, as well as the “Trump Route” project during a press conference on January 15.

According to the fact-checking platform FIP, Fidan’s remarks have been distorted by parts of Armenia’s media and certain political circles, with statements attributed to him that he did not make.

Specifically, during the portion of the press conference concerning Armenia, Fidan—referring to the agreement reached between the United States and Armenia on the implementation of TRIPP (“Trump Route to International Peace and Prosperity”), which had been discussed during Armenian Foreign Minister Ararat Mirzoyan’s visit to Washington—said that there are some technical issues related to the project. He added that Turkey and Azerbaijan are also reviewing the agreement and that he had discussed the matter with Azerbaijan’s Foreign Minister Jeyhun Bayramov.

Speaking about Turkey’s expectations from the process, Fidan stated: “We expect that this preliminary agreement between Azerbaijan and Armenia will be finalized with a signing, and that the normalization of relations between Turkey and Armenia will be implemented as soon as possible, so that we can move forward toward stability and prosperity in the region. At present, this political will exists among the leadership of Azerbaijan, Armenia, and Turkey. All three sides have this intention, and there are only a few steps that Armenia needs to take.”

Fidan also noted that elections are scheduled to be held in Armenia in

June 2026 and described this as an important phase. “We see that Armenia’s Prime Minister Nikol Pashinyan is currently leading in public opinion polls. We sincerely support the constructive role he is demonstrating on this issue. This approach and this political will must continue,” he said.

How These Remarks Were Presented in Armenia

Armenia’s media landscape, as well as political circles—primarily from the opposition—have circulated disinformation claiming that Fidan stated Turkey would support Pashinyan in the upcoming elections.

“The Turkish foreign minister openly stated today that they will support their Nikol Pashinyan in the upcoming elections,” Republican Party member and National Assembly MP Anna Mkrtchyan said in a Facebook video message.

“Turkey’s Foreign Minister Hakan Fidan has stated that Turkey supports Nikol Pashinyan in the upcoming elections,” wrote Arman Abovyan, a commentator for Sputnik Armenia.

Later, Narek Karapetyan, coordinator of the “Our Way” movement, also joined the disinformation campaign, writing on Facebook: “Turkey’s foreign minister stated that Turkey supports Pashinyan in the 2026 elections.”

Meanwhile, outlets including Tert.am, Channel 5, and Yerkir ran headlines claiming: “Turkey supports Nikol Pashinyan in Armenia’s elections.”

However, Fidan’s official statements contain no wording indicating that Turkey is interfering in Armenia’s elections or that it is officially supporting Nikol Pashinyan as a candidate.

Armenia to Participate in Malta Art Biennale

Armenia will take part for the first time in the Second Malta International Art Biennale, which will be held in Malta from March 11 to May 29 under the theme “CLEAN / CLEAR / CUT.”

Armenia’s national pavilion will present “The Sound of What Was Never Seen,” a project by Armenian painter and sculptor Raffi Yedalian, curated by art historian Sona Hovhannisyan.

The project was selected through a competition announced by the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia in June 2025.

The Armenian entry is a sculptural and sound installation that invites audiences on a contemplative virtual journey, exploring the relationship between the visible and the invisible, as well as the present and the past.

We Will Do Everything to Address All Concerns of Brotherly Iran, Says Pashinyan

YEREVAN — “We have done everything, and will continue to do everything, to address all concerns of our friendly and brotherly Iran,” Prime Minister Nikol Pashinyan said in a brief interview with reporters following a government session, responding to statements made by Iran’s ambassador.

“We are very attentive to statements coming from Iran,” Pashinyan said.

On January 14, Iran’s Ambassador to Armenia, Khalil Shirgholami, stated that Iran is concerned about protests taking place in front of the Iranian Embassy in Yerevan.

“Since 2018, no public rally has been banned anywhere in Armenia, and we cannot behave differently in a single, isolated case. That said, we do share the view that forms of expression should not disrupt the work of either the Islamic Republic of Iran’s embassy or any other diplomatic mission,” Pashinyan said.

The prime minister assured that official Yerevan is closely monitoring Iran’s concerns and, within the framework of democratic principles, will take all necessary measures to ensure that no issues arise in the functioning of the Embassy of the friendly and brotherly Islamic Republic of Iran.

“Those who cross the line of the law will face appropriate procedures. I know that administrative proceedings have already been initiated in several cases,” Pashinyan added.

Addressing Tehran’s concerns regarding the “Trump Route” project, Pashinyan noted that after August 8, during a visit to Armenia by Iran’s president, the sides held a detailed and lengthy discussion on the matter, and President Masoud Pezeshkian received answers to all of his questions.

“We have said that if questions arise in the future, we are ready to answer all of them, including any that may emerge after the publication of the text. In the course of discussions, we take into account the concerns and opinions of our international partners and try, as much as possible, to arrive at balanced solutions, which I believe has been achieved in this case,” Pashinyan said.

For more than two weeks, protests have been ongoing in Iran, which began in Tehran and spread throughout the country. The initial trigger for the demonstrations was the sharp devaluation of Iran’s national currency, the rial, but the protesters’ demands later took on a political character. Due to disruptions in communications within Iran, the full picture of the situation remains unclear; however, human rights organizations operating abroad report the use of excessive force by law enforcement agencies. According to various sources, the number of fatalities among protesters has exceeded 2,000. Iranian officials, in turn, report significant losses within the country’s law enforcement forces.

President Khachaturyan Awards Outgoing U.S. Ambassador with Order of Friendship



YEREVAN — President of the Republic of Armenia, Vahagn Khachaturyan, received Ambassador Extraordinary and Plenipotentiary of the United States to Armenia Kristina Kvien on the occasion of the completion of her diplomatic mission.

Welcoming the ambassador, President Khachaturyan thanked her for her work and cooperation, praising the activities carried out over the past three years. He noted that Ambassador Kvien served in Armenia during a particularly difficult period and shared in the challenges faced by the country. The president also highlighted the tangible results achieved, especially over the past two years, according to the Presidential Office.

President Khachaturyan emphasized the latest stage in the development of Armenian-American relations, underscoring the formation of a strategic partnership. He noted that the signing of the Strategic Partnership Charter had seemed unlikely to many as recently as last year, but developments progressed faster than expected, resulting in the August 8 document and the subsequent January 13 agreement. The president added that the path toward achieving peace in the region, with the support of the United States, is already becoming visible.

Expressing hope that peace would be lasting, President Khachaturyan said the presence and support of the United States would also contribute to the advancement of Armenia’s economic development.

For her part, Ambassador Kvien expressed gratitude for the warm reception and close cooperation, noting that significant progress had been made thanks to the consistent work of the president and the government. She stated that Armenia currently has a

strong opportunity to move forward with the agreements reached on August 8, strengthen its sovereignty and territorial integrity, and build a stable and peaceful future in the region.

Ambassador Kvien added that after completing her diplomatic mission, she would continue to remain a friend of Armenia.

President Khachaturyan wished Ambassador Kvien success in her future endeavors.

At the conclusion of the meeting, President Khachaturyan awarded Kristina Kvien the Order of Friendship for her significant contribution to deepening cooperation between the Republic of Armenia and the United States, as well as for strengthening Armenian-American relations.

Ambassador Kvien concludes her tenure in Armenia after three years marked by “strengthened ties and forward-looking cooperation between the United States and the Republic of Armenia,” the U.S. Embassy said in a press release on Friday.

“During this period, bilateral relations reached important milestones—establishing a strategic partnership, advancing business ties in technology, energy, and industry, and implementing the agreements of the August 8 Washington Peace Summit, including the Trump Route for International Peace and Prosperity. Under Ambassador Kvien’s leadership, the U.S. Embassy in Yerevan advanced programs and partnerships that reflect the shared vision of our two nations. With gratitude to Armenia and its people, Ambassador Kvien reflects on these three meaningful years and looks ahead to continued partnership, progress, and peace,” the embassy said.

Azerbaijan Returns Four Armenian

Continued from page 1

Republic of Azerbaijan.

Armenia’s Foreign Minister Ararat Mirzoyan discussed the issue of Armenians held in Azerbaijan with U.S. Secretary of State Marco Rubio in Washington on January 13. Mirzoyan disclosed this during a remote press conference on January 14, noting that possible steps for U.S. mediation and support on the matter were also discussed.

“We discussed both bilateral cooperation and prospects stemming from TRIPP, as well as potential obstacles that currently do not fully align with the emerging aspirations for peace. The issue of persons held in Azerbaijan is one of those matters,” Mirzoyan said.

On July 29, 2023, Azerbaijan abducted Vagif Khachatryan at an illegally installed checkpoint in the Lachin Corridor while he was being transferred to Armenia for medical treatment under the auspices of the International Committee of the Red Cross. In Baku, he was charged on fabricated accusations of allegedly participating in “genocidal actions against Azerbaijanis” during the first Nagorno-Karabakh war. In November 2023, Khachatryan was sentenced to 15 years in prison.

Lebanese-Armenian Vigen Eoljekjian was captured immediately

after the 2020 war. In 2021, Azerbaijan charged him with “mercenarism,” “terrorism,” and “illegal crossing of the Azerbaijani state border.” A Baku court sentenced him to 20 years in prison.

Gevorg Sujyan and Davit Davtyan were captured in November 2020, after the end of hostilities in Artsakh. During the war, Sujyan, together with friends, was delivering humanitarian aid to Artsakh. Azerbaijan accused both Sujyan and Davtyan of espionage, sentencing them to 15 years in prison.

Separately, Armenia’s Ministry of Justice announced that Armenia has transferred to Syria two individuals sentenced to life imprisonment in Armenia—Yousef Abed Al-Haj and Muhrrab Mohammad Al-Shkher.

According to the statement, on January 14, 2026, Syrian Arab Republic citizens Yousef Abed Al-Haj and Muhrrab Mohammad Al-Shkher, who had been sentenced to life imprisonment in the Republic of Armenia, were transferred via the Republic of Turkey to the competent authorities of the Syrian Arab Republic to continue serving their sentences in their country of citizenship. The transfer was carried out through cooperation between the relevant authorities and in accordance with applicable legal mechanisms.

First Batch of Pinaka Rockets Delivered

Continued from page 1

approximately \$240 million for the acquisition of four Pinaka batteries. The agreement includes the supply of guided rockets for the multiple-launch rocket systems as well as other military equipment. Deliveries of the artillery systems began in July 2023 and were completed in November 2024, with the phased export of guided rockets now underway.

According to official sources,

the rockets will be shipped to Armenia “based on readiness levels.”

It is also expected that the guided Pinaka rockets will be inducted into the Indian Army’s arsenal in the coming days. As part of this effort, Rajnath Singh inaugurated a new medium-caliber ammunition manufacturing facility operated by SDAL in Nagpur, which he said aligns with the government’s strategy to reduce India’s reliance on imported ammunition.

Journal of the Society for Armenian Studies, Volume 30 (2025), Published

FRESNO — The Journal of the Society for Armenian Studies (JSAS), the leading academic journal dedicated to Armenian Studies in the Western Hemisphere, has just published the first of two special issues to mark the 50th Anniversary of the founding of the Society for Armenian Studies. Having recently started a new chapter in its history, JSAS is now published by a highly respected and prominent academic press – the University of Nebraska Press (UNP), which for more than twenty years has published some of the most significant scholarly journals in Native American studies, women’s studies, literature, regional studies, and more.

Under the editorship of Houri Berberian (Professor of History and Meghrouni Family Presidential Chair in Armenian Studies at UC Irvine) and Talinn Grigor (Professor of Art and Architectural History at UC Davis), starting with Volume 30 (2025), each issue will feature a distinctive visual cover aligned with its thematic focus. This highlights that Armenian Studies critically engages with visual and material sources alongside textual evidence in knowledge production. Visual and material culture are the central themes in the first of two special 50th-anniversary issues. The articles offer insights into the vital role of artistic, visual, and material expressions in the rich and diverse histories of Armenians across time and geography. Additionally, book reviews curated by JSAS’s book review editor, Tsolin Nalbantian, complement the issue’s focus on visual and material culture. The second 50th-anniversary



special issue (Volume 31), with seven articles and several book reviews, is scheduled for publication in the upcoming year (2026).

Volume 30, like all future issues of JSAS, is available online through Project MUSE, a leading provider of digital humanities and social science content for the scholarly community worldwide.

JSAS invites submissions for Volume 32 (2027). The Journal is committed to advancing scholarship in Armenian Studies. It publishes peer-reviewed research from all disciplines and comparative approaches related to Armenians and Armenian Studies. To remain relevant to a broad interdisciplinary audience, it encourages submissions that are global, cross-cultural, and interdisciplinary, aligning with the latest scholarly work across various periods and fields.

Book Presentation – “Aghtamar: The Armenian Architectural Masterpiece” by Hrair Hawk Khatcherian


FRESNO — Author Hrair Hawk Khatcherian will present a talk on his new book, “Aghtamar: The Armenian Architectural Masterpiece” at 7:00PM on Friday, January 30, 2026, in the University Business Center (5245 N. Backer Ave.), Alice Peters Auditorium, on the Fresno State campus.

Khatcherian’s presentation is part of the Armenian Studies Program Spring 2026 Lecture Series and is co-sponsored by the Armenian General Benevolent Union Greater Fresno Chapter. The lecture is free and open to the public.

The Holy Cross Church of Aghtamar (in Armenian Surp Khatch), located on the island of Aghtamar in Lake Van in present-day eastern Turkey, was part of a monastic complex built (915-921AD) by the order of King Khatchik-Gagik, also known as Gagik I, of the medieval Artsruni dynasty. The abundance of decoration – both interior painting and the sculpted exterior – is unmatched, not only in Armenia, but also throughout the medieval Christian world.

“Aghtamar: The Armenian Architectural Masterpiece” is an exploration of cultural history, blending research and creative approaches. It showcases years of study and graphic illustrations and photography that serve as both artistic expressions and documentary sources, shedding light on significant moments and values from the past.

Hrair Hawk Khatcherian is an internationally-renowned photographer. Originally from Lebanon, Khatcherian moved to Canada in 1984. He has spent thirty years documenting



Armenian cultural heritage through photography and has presented exhibitions and lectures around the world. His photographs have appeared in magazines, newspapers, books and journals. Khatcherian has traveled to Armenia over 150 times and taken many risks to capture the images of monasteries, churches, fortresses, khatchkars (stone-cross in Armenian), villages, manuscripts, among others.

The lecture is free and open to the public. Free parking is available in Fresno State Lot P6 or P5, near the University Business Center. Permits are NOT required for Friday night lectures.

The presentation will also be live-streamed on YouTube at: <https://bit.ly/armenianstudiesyoutube>.

For information about upcoming Armenian Studies Program presentations, please follow us on our Facebook page, @ArmenianStudiesFresnoState or at the Program website, <https://fresnostate.edu/armenianstudies>.

Delal Dink to Deliver Memorial Lecture At Harvard University

CAMBRIDGE, MA — The Center for Middle Eastern Studies, Harvard University, and the Friends of Hrant Dink, Inc. Boston, are proud to announce the speaker of the 2026 Annual Hrant Dink Memorial Lecture, Delal Dink. The lecture will take place on January 27th.

The daughter of the late Turkish-Armenian intellectual, journalist and humanist, Hrant Dink, who was assassinated on January 19, 2007, Delal Dink will be the speaker of this important annual event. In the past lecturers of this event have featured internationally recognized human rights scholars and advocates, who have been inspired by Hrant Dink’s values and his contributions to the mutual understanding of communities and nations in conflict.

Delal Dink, a graduate of Purdue University, has been the imaginative spirit behind the Hrant Dink Foundation in Istanbul and its Director since its founding following Hrant Dink’s death.

In her lecture titled “The Future as Memorial: Commemorating Hrant Dink,” Delal Dink will reflect on the work of the Hrant Dink Foundation and its efforts to rethink commemoration not as a static act of



remembrance, but as an ongoing invitation to an alternative future. “The Foundation approaches its work as ‘remembrance in action’ – a living practice refusing to merely mourn loss, but actively build the world Hrant Dink envisioned,” reflected Delal Dink.

The 2026 Hrant Dink Memorial Lecture will take place on Tuesday, January 27, at 1730 Cambridge Street, Cambridge, in the Tsai Auditorium Harvard University, from 5:00 to 7:00 pm and is open to the public.

ARMENIAN COUNCIL
OF AMERICA
INVITES YOU

First Annual Gala

VERANDA RESTAURANT
SATURDAY, MARCH 14, 2026

141 Artsakh Ave,
Glendale, CA 91205
Half Past Seven in the Evening

TO PURCHASE TICKETS
CALL: (818) 308-5707
WWW.ARMEIANCOUNCIL.ORG/ACA

Ի Յիշատակ. Արմէն Արոյեան



USC Dornsife-ի Հայկական Ուսումնասիրութիւններու Ինստիտուտը կը յիշէ Արմէն Արոյեանի բացառիկ կեանքը, որ վախճանեցաւ 13 Յունուար 2026-ին:

Արմէնը USC-ի շրջանաւարտ էր եւ Ինստիտուտի երկարամեայ բարեկամն ու բարերարը:

Ծնած՝ 1943-ին, Եգիպտոսի Գահրէք քաղաքին մէջ, Արմէնը չորս զաւակներէն մէկն էր՝ իր եղբայրներուն ու քոյրերուն՝ Նուպարի, Զապէլի եւ Հասմիկի հետ: Անոր ծնողները՝ Ալպերթ եւ Լուսի Արոյեան, իրենց արմատները ունէին Այնթապի շրջակայ տարածաշրջանին մէջ:

1962-ին Արմէնը ներգաղթեց Միացեալ Նահանգներ՝ հաստատուելով Փասատինա, Քալիֆորնիա: Ան ուսում առաւ ճարտարագիտութեան մէջ՝ Հարաւային Քալիֆորնիոյ Համալսարանէն, եւ կերտեց յարուած ու փայլուն մասնագիտական ասպարէզ մը: Խորապէս նուիրուած իր հաւատքին եւ համայնքին, Արմէնը գործուն մասնակցութիւն ունէր Կիլիկիայ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մէջ – Փասատինայի ամենահին հայկական եկեղեցին – ուր մօտաւորապէս 40 տարի ծառայեց իբրեւ երգչախումբի ղեկավար: Ան ամբողջ կեանքի ուսանող էր՝ խոր հետաքրքրասիրութեամբ, եւ միաժամանակ եռանդուն հաւաքորդն ու պահպանողը՝ բողոքական հայկական երաժշտական աւանդութեան:

Ճամբորդութիւնը Արմէնի մեծագոյն կիրքերուն մէկն էր: Ան թէ՛ անձնական հնարաւորութիւններով, թէ՛ մասնագիտական առաքելութիւններով, լայնօրէն ճամբորդեց աշխարհի տարբեր կողմերը: Ուր որ ալ գտնուէր, ան կը ջանար գտնել ու կապ հաստատել տեղւոյն հայկական համայնքներուն հետ: Այս փորձառութիւնները վերջապէս գինք վերադարձուցին իր նախնիներու հայրենիք:

1984-ին Պոլիս կատարուած կարճ, սակայն խորապէս վերափոխիչ այցելութիւնը կասկածի տակ դրաւ երկար տարիներու ընկալումները եւ առիթ տուաւ պատմական հայկական հողերու աւելի խոր ուսումնասիրութեան: 1987-էն սկսեալ Արմէնը բազմիցս ճամբորդեց նահանգային թուրքիա՝ վերադառնալով նաեւ 1988 եւ 1989 թուականներուն: Ամէն ճամբորդութեանէն ետք ան կը կազմակերպէր նկարներով ներկայացումներ՝ Լոս Անճելըսի հայկական համայնքին հետ կիսելու իր դիտարկումներն ու փորձառութիւնները:

1991-ին Արմէնը առաջնորդեց իր առաջին խմբային ճամբորդութիւնը Արեւելեան Թուրքիա՝ եօթը մասնակիցներով: Ճամբորդութիւնը կը ներառէր այցելութիւններ պատմական հայկական վայրեր եւ հանդիպումներ տարածաշրջանին մէջ տակաւին բնակող տեղացի հայերուն հետ: Արմէնը ամէն ուղեւորութիւն կը կազմէր մեծ խնամքով՝ հիմնուելով մասնակիցներու նախնիներու ծագումին վրայ, օգնելով անոնց վերամիաւորուիլ իրենց գիւղերուն ու ծննդավայրերուն հետ: Իր հետ ճամբորդածներէն շատերը գիտնականներ էին, որոնց առաջին աղբիւրէն ստացած փորձառութիւնները հետագային կ'արտացոլային անոնց գիտական հետազոտութիւններուն ու հրատարակութիւններուն մէջ:

Արմէնը յաճախ կ'այցելէր իր մեծհօր գիւղը՝ Ճիպլին, Այնթապ երթալու ճանապարհին, եւ այդ անթիւ ուխտագնացութիւններ կ'ընէր Անիի աւերակներուն: 25 տարիներու ընթացքին՝ 1991-էն մինչեւ 2016, ան կազմակերպեց մօտաւորապէս 100 ճամբորդութիւն ամբողջ Թուրքիոյ տարածքին՝ ճամբորդելով մօտ 1,450 մասնակիցներով, զորս սիրով կը կոչէր «ուխտաւորներ»: Ան գրեթէ ամէն ճամբորդութիւն մանրամասնօրէն փաստագրեց տեսանիւններու վրայ:

Իր ճամբորդութիւններուն ընթացքին Արմէնը առաջնահերթութիւն կու տար տարածաշրջանի նօսրացող հայկական բնակչութեան հետ հանդիպելու եւ գրուցելու գործին՝ պարտականութիւն մը, որ ժամանակի ընթացքին աւելի ու աւելի դժուար կը դառնար: Տեղացի հայերը յաճախ կ'առաջնորդէին գինք եւ իր ուխտաւորները՝ մէկ հայկական տունէն կամ խանութէն միւսը, ստեղծելով յարաբերութիւններ, որոնք կը խորանային իւրաքանչիւր վերադարձի հետ:

2018-ին Արմէնը այս ճամբորդութիւններուն առնչուող մօտ 400 տեսանիւթ նուիրաբերեց USC Dornsife-ի Հայկական Ուսումնասիրութիւններու Ինստիտուտին՝ թուայնացման նպատակով, որպէսզի անոնք մատչելի դառնան հետազոտութեան եւ կրթութեան համար: 2025-ին, յաւելեալ ժապաւէններու յայտնաբերումէն ետք, թուայնացման գործընթացը ամբողջացաւ, եւ հաւաքածուին ներառումը USC-ի Թուային Գրադարանին մէջ սկսաւ:

Արդիւնքը՝ Արմէն Արոյեան

Շաբ.ը էջ 14

Պատշաճ Հանդիսութեամբ Նշուեցաւ Մելգոնեան Հաստատութեան 100-Ամեակը



Այցեալ Կիրակի, Յունուարի 18-ին, 2026 կարեւոր թուական մը հանդիսացաւ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան տարեգրութեան մէջ: Արդարեւ, այդ օրը իրապէս պատմական էր, քանի որ զոյգ միջոցառումներով՝ նշուեցաւ երբեմնի մեծ կրթօճախի հիմնադրութեան պանծալի 100-ամեակը Փասատինայի մէջ: Նախ տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ ի յիշատակ հաստատութեան հիմնադիր բարերարներ Կարապետ եւ Գրիգոր Աղա Մելգոնեան եղբայրներու:

Այնուհետեւ ներկաները փոխադրուեցան եկեղեցւոյ կից «Կիրակոս» սրահ, ուր տեղի ունեցաւ ճաշկերոյթ-հանդիսութիւն նուիրուած Կարապետ Աղա եւ Գրիգոր Աղա Մելգոնեան եղբայրներու մեծ գործի 100-ամեակին: Ընտրանի հասարակութեան մէջ ներկայ էին Մելգոնեան Կրթական Հաստատութեան նախկին շրջանաւարտներ, քոյր կազմակերպութեանց եւ հայ մամուլի ներկայացուցիչներ ու հիւրեր: Սեղաններու վրայ դրուած էին յատուկ այս առիթին համար պատրաստուած յայտագիր-գրքոյկներ, յազցուած շահեկան տեղեկութիւններով:

Օրուան զոյգ հանդիսավարներ՝ Ռաֆֆի Յնծալեան եւ Հրաչ Սեփեթճեան իրենց ելոյթներով ձեռնհասօրէն վարեցին յայտագիրը, ստեղծելով մտերմիկ մթնոլորտ: Յոտնկայս եւ միասնաբար երգուեցաւ «Մելգոնեան» քայլերգը, մենակատար՝ Փիթըր Հէյկ:

Ճաշի ինքնասպասարկումէն ետք գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Կարգացուեցաւ Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրէտրեանի «Գիր Գնահատականաց» շնորհաւորական գրութիւնը, որուն մէջ կ'ըսուի «...Թող այս հարիւրամեակը ըլլայ երախտագիտութեան, յիշողութեան եւ նորոգուած յանձնառութեան առիթ՝ ապագայ սերունդներուն համար եւ թող Աստուած իր երկնաւոր թեւերուն մէջ հանգստու-

թիւն պարգեւէ Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան եղբայրներու հոգիներուն»: Կարգացուեան նաեւ ողջոյնի գրութիւններ Հայ-Ամերիկեան Բժշկական Ընկերակցութեան եւ Ատրին Նազարեանի կողմէ:

Օրուան գլխաւոր բանախօսն էր քաղաքիս ծանօթ մտաւորականներէն եւ վաստակաշատ կրթական մշակ՝ Վարդգէս Գուրուեան: Ան համապարբակ կերպով ներկայացուց Մելգոնեան կրթական հաստատութեան պատմականը, ազգանուէր ծառայութիւնները եւ Գրիգոր ու Կարապետ Մելգոնեան եղբայրներու մեծ նախաձեռնութիւնը հայ ազգին ընծայելով պատուաբեր շրջանաւարտներ: Հոն ջամբուեցաւ ու դաստիարակուեցան հայ ինքնութեամբ նոր սերունդ մը, որ եկած էր 40 տարբեր երկիրներէ, հպարտ իր ժառանգութեամբ ու հարուստ մեր դարաւոր մշակոյթով: Ան ցաւ յայտնեց որ քսան տարիներէ ի վեր, այս հաստատութիւնը փակ կը մնայ անհասկնալի պատճառներով: Ասով հանդերձ երախտապարտ սաները՝ միշտ վառ կը պահեն իրենց անմոռանալի յիշատակները, փառք ու պատիւ բոլոր Մելգոնեանցիներուն:

Գործադրուեցաւ զեղարուեստական ճոխ յայտագիր մը մասնակցութեամբ Ճէնիա Թահմազեանի (ասմունք «Խօսք իմ Որդուն»), Վիգթորիա Սեւտայեան (երգ «Արդեօք Գիտես Դու»), Անժելա Ամիրեան («Նոկտիւր» ջութակ էտ. Պաղտասարեան, դաշնակի ընկերակցութեամբ Հրանդ Սեւտայեան-Յակոբեան), Մարալ Մարտոյեան – Քէշիշեան (ասմունք) Լեւոն Հասարճեան («Հայ Հերոսներ Երգը»), Մելիօ Էքիզեան Գանդարճեան (ասմունք):

Աւարտին՝ փակման խօսքով հանդէս եկաւ Ռաֆֆի Յնծալեան շնորհակալութիւն յայտնելով օրուան յայտագրի մասնակիցներուն եւ սատարողներուն:

Ներկաները սրահէն բաժնուեցան վերանորոգուած յուշերով եւ տպաւորիչ հանդէսի մը լաւագոյն տպաւորութիւններով:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

Massis2@earthlink.net (626) 797-7680

Լոյս տեսաւ Զայկազեան Զայագիտական Զանդէսի 45րդ Զատորի Երկրորդ Գիրքը

Իր 516 էջերուն մէջ գիրքը կը բովանդակէ խմբային հարցազրոյց մը, ուսումնասիրութիւններ նուիրուած՝ հայ արուեստին, լեզուաբանութեան, երաժշտութեան, ազգագրութեան, բանահիւսութեան, գրաքննադատութեան, պատմութեան, Հայոց Յեղասպանութեան, ինչպէս նաեւ՝ մէկ հրապարակում, երեք հաղորդումներ եւ աշխատակիցներու համառօտ կենսագրականները:

1970ին հրատարակուիլ սկսած Հայկազեան հայագիտական հանդէսը կը հրատարակուի Հայկազեան համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ: Մինչեւ 2022 ան լոյս կը տեսնէր իբրեւ տարեգիրք, իսկ այնուհետեւ սկսաւ լոյս տեսնել իբրեւ վեցամսեայ: Ստորեւ՝ բովանդակութիւնը.

Հարց-պատասխան՝ Կարէն Ճալաթեանի, Արքմենիկ Նիկողոսեանի, Թամար Պոյաճեանի եւ Արհեստական Բանականութեան հետ՝ «Արդի սփիւռքահայ գրականութիւնը» նիւթով

Վահրամ Լ. Շէմմասեան, «Մուսա Լեւան գիւղերուն թաղամասերը, ընտանիքներն ու աշխատանքը»

Զաւէն Կնեագեան, «Հաճընի երգարուեստը»

Գագիկ Մարտոյեան, «Զինակերպ վիշապը եւ անգին քարը հայ բանահիւսութեան մէջ եւ աստղային երկնքում»

Տաթև Բադալեան, «Հայաստանը Եւրոտեսիլում»

Մանէ Խառատեան, «էջեր հայկական ռոքի պատմութիւնից, մաս Գ.-հայկական ֆոլքլորը որպէս ինքնութեան կրող»

Արփի Վարդումեան, «Եղիա Տնտեսեանի նորայայտ անստորագիր գիրքը»

Անի Մխիթարեան, «Հայկական կրկնագլուխ արծուի ծագումնաբանութեան շուրջ»

Արտակ Ասատրեան, «Ածաթը գրաւոր աղբիւրներում եւ հայ ժողովրդական ընկալումներում (պատմա-ազգագրական համառոտ ակնարկ)»


Ազնիւ Զիլինգարեան, «Իրականութեան պատկերներ արդի հայ արձակում»

Միհրան Մինասեան, «Հայերէն անծանօթ հրատարակութիւններ (Լրացուցիչ ցուցակ հայ տպագիր գիրքի մատենագիտութեան)»

Եուրի Աւետիսեան, «Զանգուածային հաղորդակցութեան միջոցների ժանրեր եւ ոճ. Ժանրային բազմազանութեամբ պայմանաւորուած ոճական բազմազանութիւն»

Վարդան Մատթէոսեան, «'Իտալացի աղջկայ երգ' բանաստեղծութեան մինչեւ 'Մեր հայրենիք' օրհներգը»

Կարէն Մկրտչեան, «Կրթական գործի կազմակերպման հարցը իրանի հայօճախում»



Արմինէ Վահանեան, Թեհմինէ Մարտոյեան, «Վերապրողներու օրագրութիւնները իբրեւ Յեղասպանութեան զոհերու ինքնարժեքը ումի եւ հակազդեցութեան ներքին մեքանիզմներու հայելիներ»

Ֆաթիմա Մալահ, «Ինքնութեան սահմանը՝ փաստաթուղթերու եւ աւօրեայ կեանքին միջեւ»

Վահէ Պօղոսեան, «Անգլիահայ գաղութին քաղաքականացումը. պատերազմը ինչ տարողութեամբ փոխակերպեց անգլիահայերուն քաղաքական ինքնութիւնը 1913-1920 շրջանին»

Նարինէ Ս. Յակոբեան, «Համիդեան կոտորածները Տրապիզոնում 1895ին»

Գուր Ղազարեան, Հայկ Նազարեան, «Հայ-իրանական ռազմական համագործակցութիւնը ԺԼ. դարի 20-30-ականներին»

Յասմիկ Քեիլեան Պարան, «Զիթճեան Ընտանիքին Հաւաքածոն Գալիֆոնրնիոյ նահանգային համալսարանի Նորթրիճի ձիւղին մէջ»

Սուսաննա Ադամեան, «Հայ եկեղեցու երախտաւորները. Սարգիս արքեպիսկոպոս Զալալեանց (1810-1879)»

Անդրէյ Պասլարիու, «Մանուկի իջեւանատունը Բուխարեստում»

Միհրան Գալստեան, Յասմիկ Աբրահամեան, «Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ (ՀԱԻԱ) - 6»

Արծուի Բախչինեան, «Անուշ Ասլիբէկեան, Վիլեամ Սարոյեանի դրամատուրգիայի բնոյթը եւ հայ բեմը»

Գիրքը կարելի է ներբեռնել ՀՀ ԳԱԱ գրադարանի ու ՀՀ Ազգային Գրադարանի հետեւեալ կայքէջերէն.

<https://www.flib.sci.am/journal/haigazian/Frame.html>

<https://arar.sci.am/dlibra/publication/458738/edition/425909/content>

<https://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html>

Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան Զայ Լեզուի Եւ Մշակոյթի Ամառնային Խտացեալ Դասընթացը Օգոստոս 2026

Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան կողմէ, Վենետիկի "Stadium Marcianum" Հաստատութեան հետ գործակցաբար, կազմակերպուած Հայ Լեզուի եւ Մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը տեղի պիտի ունենայ Օգոստոս 3-19: Քննութիւնները՝ Օգոստոս 19-ին:

Ժամանում՝ 0 գ ո ս տ ո ս 2 -ին (արձանագրութիւններ), մեկնում՝ Օգոստոս 20-ին: Դիմումի պայմանաժամ՝ Ապրիլ 30:

Դասընթացքը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ, ներառեալ վերապատրաստութեան համար եկող հայերէն լեզուի ուսուցիչները:

Դասերը տեղի կ'ունենան ամէն օր, երկուշաբթիէն Շաբաթ, օրը հինգ պահ՝ առաւօտեան: Դասընթացքի տեւողութիւնը լսարանային 65 ժամերէ կը բաղկանայ, բաժնուած՝ 13 օրերու վրայ:

Դասերուն ներկայութիւնը պարտադիր է: Մասնակցութեան համար պահանջուած նուազագոյն տարիքն է 18, բայց դասընթացքի վարիչը կրնայ բացառել ծնողքին գրաւոր հաւանութեամբ: Դասերը տեղի կ'ունենան Վենետիկի Studium Marcianum-ի գլխաւոր շէնքին մէջ՝ <https://www.seminariovenezia.it/cms/galleria/il-seminario/>: Դիմումները պետք է կատարուին անձամբ եւ գրաւոր, նշելով միշտ հեռախօսի համար մը եւ ելզրային (E-Mail) հասցէ մը:

Դասընթացքին զուգահեռ տեղի կ'ունենան մշակութային ձեռնարկներ՝ մասնագիտական դասախօսութիւններ (ծրագիրը

յայտարարելի՝ զարնան վերջերը), վենետեան այցեր, մասնակցութիւն վերափոխման Ս. Պատարագին եւ Խաղողօրհնէքին՝ Սգ Ղազարու Մայրավանքին մէջ: փափաքողներուն, կէսօրէ վերջերը, ձրիաբար կ'աւանդուին՝ դուդուկի եւ հայկական պարերու դասեր:

Արձանագրութեան սակն է՝ 900 Եւ, որ կը ներառէ լսարանային դասերը եւ վերոյիշեալ այլ գործունէութիւնները: 10% զեղչ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, գոնէ երկու անգամ: Նոյն զեղչը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մեկուն (կողակից, ծնողք, քոյր, եղբայր): արձանագրութեան սակը ո'չ մէկ պարագայի կը փոխուի եւ կատարուած վճարումը որեւէ պատճառով չի վերադարձուիր, բացի բժշկական վկայագրով հաստատուած հիւանդութեան պարագայէն:

Դրամատնային փոխանցումին (bank transfer) համար, յետ դիմումին ընդունելութեան՝ դիմորդը պիտի ստանայ Պո-Արաքս Ընկերակցութեան դրամատնային հաշուի հաշուաւոր տեղեկութիւնները (հաշուեթիւ / IBAN եւլն.): Դրամատնային կամ այլ կերպի փոխանցումի բոլոր ծախսերը դիմողին կը պատկանին:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն՝ Վենետիկի պատմական կեդրոնին մէջ, օժտուած՝ խոհանոցային յարմարութիւններով:

Իւրաքանչիւր ճաշ կամ

Շաբ.ը էջ 15

JOIN US FOR OUR

KIDS PAINTING CLASSES

CLASSES START JANUARY 9, 2026

EVERY FRIDAY AT 5PM
WITH TEACHER MANIA GERMAGIAN

AERU CENTER
1060 N ALLEN AVE. PASADENA, CA 91104

REGISTER NOW!
WITH NOR SEROUNT/AREV
(626) 738-5639

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՍԻՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ԵՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ԾՆՆԴԵԱՆ 140-ԱՄԵԱԿԻՆ

Միսաք Մեծարենց՝ Քանքարավառ Գեղարուեստագետ Բանաստեղծը

ՅԱԿՈԲ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

Միսաք Մեծարենց (Միսաք Մեծատուրեան՝ բուն անունով, Արեւմտեան Հայաստան, Ակնայ գաւառի Բինկեան գիւղ, 19 Յունուար 1886 – Կ. Պոլիս, 5 Յուլիս 1908) բանաստեղծին կարապի երգն եղող «Քո՛յր, Մօտեցիր Կրակին» բանաստեղծութիւնը՝ անոր վաղաժամ շիջումէն քանի մը օր առաջ ստեղծագործուած ու մահամերձ վիճակին մէջ մտերիմ բարեկամի մը ձեռամբ եւ յանձնարարութեամբ գրուած, կանխատեսեր եւ մատներ էր հոգին եղերեաբախտ ու վաղամեռիկ քերթողին, կարծէք պոլսահայութիւնը զգուշացնելով շուտով հրապարակուելիք Օսմանեան նոր սահմանադրութեան (10 Յուլիս 1908) illusion-էն, պատրանքէն, որուն «եղբայրական», «հաւասարական», «ազատախօսական» ստապատիր լոզունգները տակաւ առ տակաւ պիտի բարձրանային միացող եղեռներու...

Քո՛յր, մօտեցի՛ր կըրակին,
ծըխէ տերեւն այս բուրեան,
զի ամէն բան իմձ կրկին
կը դարձընէ հոսմ արեան:

.....
Քո՛յր, մօտեցո՛ւր իմ ձեռքին
Աստուածաբոցն հըրացան,
զի ամէ՛ն բան իմձ կրկին
կը յիշեցնէ վրէժն արեան...:

Սոյն քերթուածը կարելի է համարել քնարերգակ հանճարեղ բանաստեղծին՝ արեւմտահայութեան ազգային մտահոգութեանց ոլորտները շրջագծող միակ մարտաշունչ մեղեդին, անոր սողերուն ներքեւէն հոսեցնելով կոյս ու կոկոն թախիծն արտասութիոր...:

Արդարեւ, արեւմտահայ քերթողութիւնը Հայ ցեղի գեղարուեստական ճաշակին ու զօրութեան որպէս տիրական ռահվիրայ՝ գլխաւորապէս երեք բանաստեղծի անուն տուաւ Գեղապաշտ սերունդին մէջ – Թէքէեան, Վարուժան եւ Մեծարենց, որոնք իրենց երկնատուր ու հօր անհատականութեանց ընդմէջէն, իրենց Բանին Գեղեցկութեամբը, ապրումին խորութեամբ ու թելադրական զօրութեամբը, ազգայնականութեան լարէն անդին, դէպի համամարդկային սուգումներ՝ բացին աշխարհներ՝ ժողովուրդներու կեանքէն բարձրարուեստ իրականութիւններ քանդակելով ու կտակելով մեզի:

Մեծարենց՝ բնութեան ու անոր բոլոր քաղցրութիւններուն վրայ բացուած վիրաւոր հոգի մը, ակնցիւի իր աւիւնը առնելով իր ներքին ձայներուն վաւերական կրակէն, իր բուրումնայնեղ «իրիկունան իղձ»երը, «հիւրընկալ հիւղ»երը, զարնանավառ ու երփներանգ վարդաստանները կը ցաւընել տիեզերականութեան տանող չմարող բոմբիւններ, դառնալով մարդերգութեան հոգիի ամէնէն հարազատ բանաստեղծը՝ գեղարուեստագէտի գրեթէ անթերի լեզուով մը, որուն վճիտ գլգլումներով փարթամ բառամթերքին մէջ կը վայելենք յաւերժափառ գարնանացումը Գեղեցիկին՝ արուեստի անկրկնելի իմաստնութեամբ ու Աստուածաշնորհ զգացումներով..-

Իրիկունս է բարի՛, բարի՛, ու լիաձեռն ու հոտեւան.



ոսկի ուղ մը՝ կամուջ եղած ընդմէջ տիւիմ եւ գիշերուան.

վարսադիտակ ծառերուն տակ կը կղկաթիմ լոյսին համար:

Արեւին պերճ լոյսին համար՝ որ կը փաղփի քրքմանկար

մէջն հոտեւան ծայրիներու ծայրածաւալ ծաղիկներուն՝

ուր դիցանուէր բաժակներու քամեց ամբոսն անյագ մեղուն:

Վաղամեռիկ քերթողը մէկն է համաշխարհային գրականութեան հանճարներու շարքին եղող ոչ մեծ թիւով անուններէն. իսկ երկնատուր տաղանդը կտակն է իր հայու անբասիր հոգիին՝ ամէն բանէ առաջ, շաղախուած կարօտովը իր հայրենի հողին, անոր բնութեան կանչին, առուակներու խոխոջին, մնալով իր անագորոյն ցաւի՛ն իսկ մէջին քնասոյգ, ինքնամփոփ, սուրբ ըմբոստացումներու գուսպ երգիչը՝ յանկուցիչ յուզականութեամբ մը դիմադրելով անողոք ճակատագրի ցաւոտ հարուածներուն..-

... Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ-քիչ կը մաշի՛,

շրթունքս եմ ծարաւ միակ համբոյրին...:

Յնծագին գիշերն է լոյս ու լուսին

բայց լոյսն իմ հոգւոյս քիչ-քիչ կը մաշի...:

Մեծարենցի գրականութեան սկզբնաւորութեան աղմկալի յաջողութիւնը յայտնութիւնը կ'ընէ Վահան Տէրեան բանաստեղծին գրական հրապարակ մուտքին: Գրեթէ միաժամանակ քերթողական արուեստի ճամբան ահօսել սկսած երկու խոշոր քնարերգակներն ալ իրենց ստեղծագործութեանց շարք մը արշալուսային դոփիւններով, մահուան նայող վերջալոյսներով նման են իրարու: Առաջինը՝ արեւմտահայ գրականութեան մէջ հանդիսացաւ այն ամբոխուող ապրումներու, անքոյթ անըջագծութիւններու, շառափնաթափ ու թախժոտ զգայնութիւններու երգիչը, երկրորդը՝ արեւելահայ գրականութեան մէջ:

Հագիւ հինգ տարի տեւած ստեղծագործական կեանքը Մեծարենցի՝ կ'իյնայ ան ճակատագրական մռայլ մակընթացութիւններով այնպիսի ժամանակաշրջանի մը վրայ, երբ Համիտեան Պոլիսը՝ պարպուած հայ մտաւորականութենէ, ա՛յնքան կարիքն ունէր աշխարհ մը գրական խանդավառութիւններու՝ գրարուեստի ոստան մնալու համար:

Խարբերդի Բինկեան գիւղը ծնած փոքրիկն Միսաք վեց տարեկանին կը յաճախէ տեղի Մեսրոպեան, ապա Սվազ քաղաքի Արամ-

եան վարժարանը՝ մինչեւ 1896, որմէ ետք մինչեւ 1901՝ Մարգուանի «Անատոլիա» քոլէճը, որուն նախապատրաստական շրջանը կ'աւարտէ նոյն տարին:

Դպրոցական տարիներուն արդէն իր մէջ ձեւաւորուեր էին գրական ձիրքերը: 1901–1903 թուականներուն գրուած իր շուրջ 40 քերթուածները ան մեծ խնամքով ամփոփեր էր «Բաբախումներ» խորագիրը կրող տետրակի մը մէջ՝ զանոնք յանձնելով իր ուսուցիչ

զան թոքախտի նշանները: Չորս տարի ետք սաստկացող հիւանդութիւնը կը ստիպէ զինք հեռանալ ենիգափուէն ու ծնողքին հետ կը հաստատուի Թոփգափու, ուր երկու տարի նուիրուելով գրական գործունէութեան՝ կ'աշխատակցի պոլսահայ գանազան թերթերու եւ հանդէսներու – «Մասիս», «Սուրհանդակ», «Նաւասարդ», «Ծաղիկ», «Մանգումէի էֆքեար», Շաւասպ եւ Ծիածան ծածկանուններով, հուսկ՝ Մեծարենց գրական



Հրանդ Ասատուրի հոգածութեան: Իր առաջին տպագիր բանաստեղծութիւնը՝ «Փունջերը», նուիրուած իր ամենամօտիկ ընկերոջ՝ Ներսէսի յիշատակին, լոյս կը տեսնէ 10 Մարտ 1903-ին, Պոլսոյ «Հանրագիտակ» հանդէսին մէջ՝ Օրդ. Սիրանոյշ Պէրպէրեան ծածկանունով..-

Դեռ չողջունած երագներու քիմջ առտուն՝

հովէն փչուած մոմի մը պէս շիջար դուն:

Թուփերու հետ հովերն զքեզ ալ տարին

միացընել մահուան ահեղ շուրջպարին:

1901-ին, պատանի Մեծարենցի մէջ առաջին անգամ երեւան կու

անունով:

1906-ին պատրաստած իր առաջին գիրքը՝ «Ոսկի Արիշին Տակ», գրաքննութիւնը կը մերժէ զայն հրատարակել: Հատորը լոյսի բարիքին կու գայ 1907-ի ամրան՝ «Ծիածան» խորագիրով: Նոյն տարուան աշնան, մեծ ճգնաճիւղով ու յամառ աշխատանքով կը հրատարակէ իր երկրորդ քերթողագիրքը՝ «Նոր Տաղեր»ը, նուաճելով գրական հրապարակը, արժանիօրէն գրաւելով պոլսահայ գրականութեան ծիրանափառ պատուանդանը:

Եւ հակառակ իր մտերիմներէն եղող Տոքթ. Տիգրան Գասապ-

Շար.ը էջ 15

Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցի
Armenian Cilicia Evangelical Church

ARMEN AROYAN LIBRARY
ԳԻՐՔԻ ԾՆՈՐՀԱՆՈՒԹՅՈՒՆ
BOOK SIGNING

Մարտիրոս Կերթմէնեանի Հոգեւոր Ապրումները
Վերապատուելի Գեորգ Թերեան
Mardiros Gertmenian's Spiritual Perspective
Rev. Kevork Terian
Գիրքը Կը Ներկայացնէ
Փրոֆ. Վահրամ Շեմասսեան
The book will be presented by
Prof. Vahram Shemmassian (CSUN)
Գեղարուեստական Յայտագիր
Ուրբաթ, Յունուար 30, 2026, Երեկոյեան Ժամը 7:30ին
Friday, January 30, 2026 7:30 p.m.
339 S. Santa Anita Avenue
(South Altadena Drive) near Del Mar Blvd. Pasadena, CA 91107

Մուտքը Ազատ
RSVP 818-618-3708 or 714-488-1288
Հիւրասիրութիւն

Սերգեյ Փարաջանովի 102-Ամեակը՝ Նոր Ոգով. Կինոռեժիսորի Թանգարանում Անիմացիոն Ցուցադրուժին Բացուեց



Խորհրդալին եւ համաշխարհային կինոյի ինքնատիպ ռեժիսորներին մէկը՝ Սերգեյ Փարաջանովի 102-ամեակի առթիւ նրա ծննդեան օրը՝ Յունուարի 9-ին, ստեղծագործողի թանգարանում բացուեց «Ֆիլմեր եւ Հայտնիներ» խորագրով ցուցահանդէսն ու ընթերցողներին ներկայացուեց «Կոլաժ ինքնակարի ֆոնի վրայ» գիրքը:

Թանգարանի տնօրէն Անահիտ Միքայէլեանն ընդգծեց՝ անիմացիոն ցուցադրութիւնը նորութիւն է թանգարանում, ուստի մտաւ խնդիր ինքնին ունեցել, թէ ինչպէս այն կ'ընդունուի, քանի որ թանգարանի այցելուները 35 տարի շարունակ դիտել են հիմնական ցուցադրութիւնը, առնչուել այն աւանդութիւններին ու սովորութիւններին, որոնք Փարաջանովից ժառանգել էր կինոռեժիսորի անձնական լուսանկարիչ, թանգարանի հիմնադիր եւ տնօրէն Զաւէն Սարգսեանը:

«Դժուար էր փոփոխութիւն մտցնել այն ցուցադրութեան մէջ, որը տարիներ ընթացքում մշակել էր Զաւէն Սարգսեանը: Հէշտ չտրուեց: Երկար ենք մտածել՝ ինչ անել հիմնական ցուցադրութեանն ու էքսկուրսիային չխանգարելու համար», - խոստովանեց Միքայէլեանը:

Անիմացիոն ցուցադրութեան շրջանակում թանգարանի երկու հարկում տեղադրուած մեծ էկրաններին հնարաւոր է ծանօթանալ Փարաջանովի եւ նրա մեծանուն ժամանակակիցների՝ Անդրեյ Տարկովսկու, Իվ Սեն Լորանի, մադամ դը Գոլի, Մարչելո Մաստրոեանիի եւ այլոց մասնակցութեամբ հետաքրքիր պատմութիւնների, որոնց մի մասին հանրութեան լայն շրջանակը ծանօթ է:

«Թանգարանները զարգանում են, այցելուների պահանջները փոխւում են, շատերը ցանկանում են նոր ու հետաքրքիր լուծումներով ցուցադրութիւններ տեսնել: Մենք փորձեցինք նորարարական լուծումներից գտնել ամենահարմարը. թանգարանը չունի առանձին անիմացիոն ցուցադրութիւնների տարածք, ուստի դիմեցինք այս տարբերակին՝ պահելով փարաջանովեան ռիթմը: Առաջին հարկում Փարաջանովն ու այլ յայտնի մարդիկ են, իսկ երկրորդ հարկում՝ նրա ֆիլմերը, ինչպէս նաեւ Փարաջանովի Զոկոնդային նուիրուած պատմութիւնը», - մանրամասնեց Միքայէլեանը:

Նա տեղեկացրեց, որ ձեւաչափը պահպանուելու է, իսկ անիմացիոն ֆիլմերն անընդհատ փոփոխուելու են եւ թոյլ են տալու նորովի բացայայտել Սերգեյ Փարաջանով արուեստագէտին եւ մարդուն:

Անդրադառնալով «Կոլաժ ինքնակարի ֆոնի վրայ» գրքին՝ տնօրէնը յիշեցրեց, որ այն առաջին անգամ հրատարակուել է 2005 թուականին: Հեղինակը Փարաջանովի մտերիմ ընկերն է՝ Կորա Ծերեթելին, որի հետ շատ են ճամբորդել: Կորա Ծերեթելին բազմիցս հիւրընկալուել է Փարաջանովի տանը, նրա պատուաւոր հիւրն է եղել: Ծերեթելին գիրքը ստեղծել է՝ յենուելով իր՝ Փարաջանովի հետ կապուած յուշերի վրայ: Թանգարանը գիրքը վերահրատարակելու բացառիկ թոյլտուութիւն է ստացել հեղինակից, սակայն որոշ փոփոխութիւններ է արել. ուսասլէզու գրքում ներառուել են այն լուսանկարները, որոնք առկայ են թանգարանի ֆոնտերում: Ազգագրագէտ Լեւոն Աբրահամեանը եւս մտերիմ է եղել Փարաջանովի հետ, ուրախալի համարեց Ծերեթելիի գրքի վերահրատարակումը:

«Ծերեթելին պէտք է Հայաստան գար Փարաջանովի յրելեանին նուիրուած միջոցառմանը, սակայն չստացուեց, իսկ այս գիրքը մեծ դեր խաղաց Փարաջանովին առաւել հանրահռչակելու գործում, որովհետեւ դրանում ներառուել են հեղինակի յուշերն ու որոշ սցենարներ: Կորան առաջիններից էր, որ Փարաջանովի հետ արտերկիր էր մեկնել. նա զարմանալի պատմութիւնների մասին է գրել այս գրքում», - ասաց նա:

Աբրահամեանը յիշեցրեց, որ Փարաջանովի 100-ամեակի շրջանակում կազմակերպուել էր գիտաժողով եւ յայտարարուել էր, որ գիրք է հրատարակուելու, որն արդէն պատրաստ է: «Թւում է՝ ամէն ինչ ասուած է, բայց պարզուեց՝ դեռ շատ բան կայ ասելու նրա մասին: Փարաջանովը բաց երեւոյթ է եւ ես յոյս ունեմ, որ այս տարի Երեւանում կը լինի այն, ինչը Դենիել Բրրդն անուանել է «Կինոյի տաճար», երբ տարբեր մոնիտորների վրայ ցուցադրուում են ֆիլմերից կադրեր, որոնք դուրս են մնացել բուն ֆիլմից: Առաջին անգամ Փարաջանովի ֆիլմերից դուրս մնացած կադրերը ցուցադրուել են Ռոտերդամում: Տարբեր մոնիտորների վրայ ցուցադրուող կադրերը կապուած են եւ մի մոգախիկ է ստեղծւում, ինչի արդիւնքում ամէն ֆիլմ նորովի է ապրում», - ընդգծեց Լեւոն Աբրահամեանը:

Սերգեյ Փարաջանովը կինոյի պատմութեան ամենավառ անհատականութիւններից է: Նա ծնուել է Թիֆլիսում: Փարաջանովը բացայայտ քննադատական մօտեցում է ունեցել խորհրդային բարքերի

նկատմամբ, ինչի պատճառով պարբերաբար ենթարկուել է պարսաւանքի, իսկ հաստատման ներկայացուող սցենարները մերժուել են կասկածելի պատճառաբանութիւններով:

Մինչեւ 1963 թուականը նկարահանել է 4 լիամետրաժ գեղարուեստական եւ 3 վաւերագրական ֆիլմեր, որոնք ոչնչով աչքի չեն ընկել: 1964-ին «Մոռացուած նախնիների ստուերները» ֆիլմը նրան համաշխարհային ճանաչում է բերել, սակայն Փարաջանովի կեանքի տարօրինակութիւնը կայանում է նրանում, որ այն պահից, երբ յայտնի է դարձել, սկսուել են նրա դժբախտութիւնները: 1965-ին նա սկսում է նկարահանել «Կիւեւեան որմնանկարներ» հակապատերազմական ֆիլմը, որը շուտով արգելւում է: 1966-ին նրան հրաւիրում են Հայաստան, որտեղ սկսում է նկարահանել «Սայաթ-Նովա» ֆիլմը, որը դառնում է նրա գլուխգործոցը: Կինոնկարը մեծ դժուարութիւններով է էկրան բարձրանում «Նուան գոյնը» անունով, ինչից յետոյ Փարաջանովը 15 տարի վտարւում է կինոյից:

Ֆրանսացի ականաւոր կինոռեժիսոր, սցենարիստ Ժան-Լիւկ Գոդարը Փարաջանովի մասին ասել է. «Կինոյի տաճարում կան պատկերներ, լոյս եւ իրականութիւն: Եւ այդ տաճարի տիրակալը Սերգեյ

Հայաստանի Գերիշխանութիւնը

Շարունակուած էջ 1-էն

իրենց վերապահուած պիտի ըլլայ փաստաթուղթերու ու բեռներու ստուգման իրաւունքը:

Առաջին օրէն, պաշտօնական Երեւանը յայտարարած էր, որ Ատրպէյճանի պահանջած «Զանգեզուրի միջանցք» հասկացողութիւն գոյութիւն չունի ու այդ կարմիր գիծ է իր համար: Հայաստան միգնչել վերջ մնաց իր սկզբունքային կեցուածքին վրայ՝ ստիպելով Ատրպէյճանին ետ քայլ կատարելու: Միւս կողմէ, Ռուսաստան կը փորձեր գործադրութեան դնել 44-օրեայ պատերազմի աւարտին ստորագրուած եռակողմ յայտարարութեան 9-րդ կէտը, որուն համաձայն Ռուսական զօրքերը պիտի հսկէին Սիւնիքով անցնող եւ Ատրպէյճանը Նախիջեւանին կապող ճանապարհը: Նոյնիսկ կը խօսուէր ճանապարհի երկու կողմերը փշալարեր տեղադրելու մասին, որպէսի այդ դառնայ իսկական ազատ միջանցք: Սակայն, առաջին օրէն իսկ Ատրպէյճան սկսաւ խախտել զինադադարի համաձայնութեան բոլոր կէտերը, իսկ Ռուսաստանին յանձնուած Լաչի-

րահանել «Կիւեւեան որմնանկարներ» հակապատերազմական ֆիլմը, որը շուտով արգելւում է: 1966-ին նրան հրաւիրում են Հայաստան, որտեղ սկսում է նկարահանել «Սայաթ-Նովա» ֆիլմը, որը դառնում է նրա գլուխգործոցը: Կինոնկարը մեծ դժուարութիւններով է էկրան բարձրանում «Նուան գոյնը» անունով, ինչից յետոյ Փարաջանովը 15 տարի վտարւում է կինոյից:

Ֆրանսացի ականաւոր կինոռեժիսոր, սցենարիստ Ժան-Լիւկ Գոդարը Փարաջանովի մասին ասել է. «Կինոյի տաճարում կան պատկերներ, լոյս եւ իրականութիւն: Եւ այդ տաճարի տիրակալը Սերգեյ

նի միջանցքը աւարտեցաւ Արցախի պաշարմամբ ու ապա շրջանի Հայութեան տեղահանմամբ: Այս բոլորով հանդերձ, Հայաստանի մէջ կային քաղաքական շրջանակներ, որոնք կը պահանջէին գործադրութեան դնել զինադադարի համաձայնութեան այդ 9-րդ կէտը, որուն ընդդիմացան իշխանութիւնները՝ արժանանալով Ռուսաստանի եւ ռուսամետ ընդդիմադրութեան քննադատութիւններուն:

Հայ-Ամերիկեան այս գործարքը կոչուած է դառնալու Հայաստանի դիւանագիտութեան ամենէն մեծ յաջողութիւններէն մին, որուն պտուղները պիտի քաղուին յաջորդող տասնամեակներուն վրայ:

«Թրամփի Ուղիւն» Հայաստանին կ'ապահովէ եկամուտներ, Սիւնիքին կու տայ զարգացման հնարաւորութիւններ, կ'երաշխաւորէ շրջանէն ներս ապահովութիւնը ու պատերազմի գրեթէ բացառումը, իսկ ամենէն կարեւորը՝ կը հաստատէ Հայաստանի գերիշխանութիւնը իր ամբողջ տարածքներուն վրայ:

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

Ի Յիշատակ. Արմէն Արոյեան

Շարունակուած էջ 11-էն

Հաւաքածուն, եզակի ներդրում մըն է ժառանգուած յիշողութեան եւ սփիւռքեան վերադարձի ուսումնասիրութեան մէջ: Ան կը ներկայացնէ հազուագիւտ տեսողական փաստագրութիւն պատմական վայրերու, ուր հայկական կեանքի եւ ներկայութեան հետքերը տակաւին կը պահպանուին: Խնամիրտուտը նաեւ իրականացուց Արմէնին հետ կարճ բանաւոր պատմութեան հարցազրոյց մը, որ այժմ պահպանուած է «California History Through Armenian Experiences» արխիւին մաս կազմելով:

Արմէնի կեանքի գործը

Նոր Տարուան Շնորհաւորանքներ

Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի առթիւ իրենց շնորհաւորանքները յղելով բոլորին, «Մասիս» Շաբաթաթերթին կը կատարուին հետեւեալ նուիրատուութիւնները.

Տէր եւ Տիկին Արմէն եւ Ռիթա Պարանեան 200 տոլար
Տէր եւ Տիկին Միհրան եւ Սոնա Սիմոնեան 200 տոլար
Տէր եւ Տիկին Աւօ եւ Ալին Մակարեան 100 տոլար

ՍԵՆԵԿԱԼՆ՝ Ափրիկեի Ազգերու Գաւաթակիր



Ֆուլթպոլի Սենեկալի հաւաքականը նուաճեց Մարոքոյի մէջ կայացած Ափրիկէի Ազգերու Գաւաթի մրցաշարին յաղթողի կոչումը:

Ռապալթի մէջ տեղի ունեցած եզրափակիչին, սենեկալցիները լրացուցիչ ժամանակին ընթացքին 1:0 արդիւնքով պարտութեան մատնեցին Մարոքոյի հաւաքականը:

Երկրորդ խաղակէսի աւելցուած ժամանակին Մարոքոյի հաւաքականէն 11-մեթրանոցը անարդիւնք կատարեց Մատրիտի «Ռէալ»-ի յարձակող Պրահիմ Տիաւը:

94-րդ վայրկեանին ուշադրութիւն գրաւեց սպանական «Վիլլառէալ»-ի 26-ամեայ կիսապաշտպան Փափէ Կէյն:

Սենեկալը երկրորդ անգամ նուաճեց այս տիտղոսը: Նախորդ անգամ Ափրիկէի Ազգերու Գաւաթակիր դարձած էր 2021 թուականին՝ Քամերունի մէջ:

Մարտինէսի Կոլը Յաղթանակ Ապահովեց «Ինթերին»

Խաղիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին փոխախօյեան Միլանի «Ինթէրը» հիւրընկալուեցաւ «Ուտինէզէն» եւ յաղթեց 1:0 արդիւնքով:

Մրցումի միակ կոլը 20-րդ վայրկեանին նշանակեց աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի յարձակող Լաուտարօ Մարթինէսը:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթէրի» հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ 78-րդ վայրկեանին:

«Ինթէրը» 49 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Ուտինէզէն» 10-րդ դիրքին վրայ է՝ 26 կէտով:



«Ռէալ»-ի Յաղթանակը՝ 2:0

Սպանիոյ առաջնութեան 20-րդ հանգրուանին փոխախօյեան «Ռէալը» Մատրիտի մէջ ընդունեց «Լեւանթէն»-ն եւ յաղթեց 2:0 արդիւնքով:

Ուշադրութիւն գրաւեցին ֆրանսացի յարձակող Քիլիեան Մպափէն եւ սպանացի պաշտպան Ռաուլ Ասենսիոն:

«Ռէալը» 48 կէտով երկրորդ դիրքին վրայ է, իսկ «Լեւանթէն»՝ նախափերջին դիրքին՝ 14 կէտով:

Մպափէն դարձաւ Ֆրանսայի պատմութեան երկրորդ լաւագոյն ռմբարկուն:

Մպափէն իր մարզական ասպարէզի ընթացքին նշանակած է 412 կոլ: Լա Լիկայի 20-րդ հանգրուանին «Լեւանթէին» դէմ նշանակած կոլով ան անցաւ Թիէրի Անրիին:

Ֆրանսացի լաւագոյն ռմբարկուն Սէուտական Արաբիոյ «Ալ Իթթիհատի» կացմէն հանդէս եկող Քարիմ Պենզեման է՝ 513 կոլով:

«Պարսելոնայի» Անսպասելի Պարտութիւնը

Սպանիոյ առաջնութեան 20-րդ հանգրուանին, ախոյեան եւ առաջատար «Պարսելոնան» հիւրընկալուեցաւ «Ռէալ Մոսիէտատէն» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

Դաշտի տէրերէն ուշադրութիւն գրաւեցին սպանացի յարձակող Միքէլ Օիարսապալն ու փորթուկալացի յարձակող Կոնսալու Կեդէշը:

Գերմանացի Հանս-Դիթըր Ֆլիկի գլխաւորած խումբին միակ կոլը նշանակեց անգլիացի յարձակող Մարքուս Ռէշֆորտը:

«Պարսելոնան» 49 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ մէկ կէտով առաջ կ'անցնի երկրորդ դիրքին վրայ գտնուող Մատրիտի «Ռէալ»-էն: «Ռէալ Մոսիէտատը» ութերորդ դիրքին վրայ է՝ 24 կէտով:

«Մանչըսթըր Եունայթըտ»-ը Պարտութեան Մատնեց «Մանչըսթըր Սիթի»-ին



Անգլիոյ Փրեմիէր Լիկայի 22-րդ հանգրուանին «Մանչըսթըր Եունայթըտ» «Օլտ Թրաֆորտ» իր դաշտին վրայ 2:0 արդիւնքով պարտութեան մատնեց «Մանչըսթըր Սիթիին»:

Անգլիացի Մայքըլ Քէրիքի գլխաւորած խումբէն ուշադրութիւն գրաւեցին քամերունցի յարձակող Պրայըն Մպէմոն եւ թանիացի կիսապաշտպան Փաթրիք Տորկուն:

«Մանչըսթըր Սիթի» 43 կէտով երկրորդ դիրքին վրայ է, իսկ «Մանչըսթըր Եունայթըտ» չորրորդ դիրքի՝ 35 կէտով:

«Արսենալ» Չկրցաւ Յաղթել «Նոթինկեմ Ֆորեսթին»

Անգլիոյ Փրեմիէր Լիկայի 22-րդ հանգրուանին փոխախօյեան «Արսենալը» հիւրընկալուեցաւ «Նոթինկէսթ ֆորեսթէն» եւ խաղը հաւասար արդիւնքով վերջացաւ 0:0:

«Արսենալ» 50 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Նոթինկէսթ ֆորեսթը» 17-րդ դիրքին վրայ է՝ 22 կէտով:

«Լիվըրփուլ» Կէտեր Կորսնցուց, «Չելսին» Աւելի Ուժեղ Էր «Պրէմֆորտէն»

Անգլիոյ Փրեմիէր Լիկայի 22-րդ հանգրուանին, ախոյեան «Լիվըրփուլը» իր դաշտին վրայ չկրցաւ յաղթել «Պրէմիերին»:

Մրցումը աւարտեցաւ հաւասար՝ 1:1 արդիւնքով:

«Լիվըրփուլը» 36 կէտով չորրորդ դիրքին վրայ է, իսկ «Պրէմիերին»՝ 18-րդ՝ 14 կէտով:

Աշխարհի ակումբային ախոյեան «Չելսին» Լոնտոնի մէջ 2:0 արդիւնքով յաղթեց «Պրէմֆորտին» եւ 34 կէտով գրաւեց վեցերորդ դիրքը: «Պրէմֆորտը» յայտնուեցաւ եօթներորդ դիրքին վրայ՝ 33 կէտով:

Տէնպելի Տուալը Յաղթանակ Ապահովեց ՊՍԺ-ին

Ֆրանսայի առաջնութեան 18-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն ընդունեց «Լիլը» եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

Տուալի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Ուսման Տէմպելէն: Ուշադրութիւն գրաւեց նաեւ ֆրանսացի յարձակող Պրետլի Պարքլան: ՊՍԺ-ն 42 կէտով առաջնութեան առաջատարն է, իսկ «Լիլը» չորրորդ դիրքին վրայ է՝ 32 կէտով:

2025 Թուականի Ամենաբարձր Վարձատրուող Մարզիկներու Տասնեակը

Sportico-ն ներկայացուց 2025 թուականի ամենաբարձր վարձատրուող մարզիկներու տասնեակը:

Քրիշթիանը Ռոնալտօ (ֆուլթպոլ)՝ 260 միլիոն տոլար
Սաուլ Ալվարէս (բուքարմարտ)՝ 137 միլիոն տոլար
Լիոնէլ Մեսսի (ֆուլթպոլ)՝ 130 միլիոն տոլար
Խուան Սոթօ (պէյսպոլ)՝ 129,2 միլիոն տոլար
Լեպրոն ձէյմս (պասքէթպոլ)՝ 128,7 միլիոն տոլար
Քարիմ Պենզեմ (ֆուլթպոլ)՝ 115 միլիոն տոլար
Սթեֆըն Քըրրի (պասքէթպոլ)՝ 105,4 միլիոն տոլար
Սյոհէյ Օթանի (պէյսպոլ)՝ 102,5 միլիոն տոլար
Քեւին Տիւրանթ (պասքէթպոլ)՝ 100,8 միլիոն տոլար
Ճոն Ռամ (կոլֆ)՝ 100,7 միլիոն տոլար

www.massisweek.com

Weekly News Update